Azg
armenian daily
18 ՅՈՒՆՈՒԱՐ 1994, ԵՐԵՔՇԱԲԹԻ, # 7 (510)

Իտալական ընտրություններ մարտին

Առաջիկա մարտի 27-ին Իտալիայում կկայանան խորհրդարանական ընտրությունները, վճռեց նախագահ Օսկար Լուիջի Սկալֆարոն, վարչապետ Կարլո Չիամպիի հրաժարականն ընդունելուց եւ խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո: Առաջիկա կանխահաս ընտրություններով, փաստորեն, կվերանա ներկա խորհրդարանի իշխանությունը, որի ամենագլխավոր հատկանիշն այն եղավ, որ նրա անդամների մեկ երրորդը դատական գործի ենթակա են կոռուպցիոն գործունեության հետեւանքով:

Զուլուները Պրետորիայի փողոցներում

Հարավաֆրիկյան հանրապետությունում խաղաղ համակեցության վերջին բանակցություններից իրենց դուրս ոտահած զուլումների թագավոր Գուդուիկը երեկ Պրետորիայում հանդիպում ունեցավ վարչապետ Դե Քլերքի հետ: Հանդիպմանը զուգահեռ իրենց թագավորին ուղեկցելու համար հաղար ժամանեց նաեւ նրա ցեղակիցների 30 հազարանոց բանակը, ավանդական նետ-աղեղով զինված: Ոստիկանության ու զուլուների միջեւ տեղի ունեցավ արյունոտ բախում, զոհվեցին 12 զուլուներ եւ վիրավորվեցին ավելի քան 100 հոգի երկու կողմից: ■

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Ռուսաստանն անաչառ է»

«Ադրբեջանական կողմը հաճախ քարոզչական նպատակներով սիրում է վկայակոչել միջազգային իրավունքը: Այդ դեպքում պետք է բացատրել, թե այդ իրավունքի ո՞ր նորմերն են թույլատրում ռազմական օգնության խաղաղ բնակչության դեմ, ինչպես դա տեղի ունեցավ անցած շաբաթ: Հերթական անգամ օդային հարվածն ուղղված էր ոչ թե ռազմական օբյեկտների, այլ խաղաղ բնակավայրերի դեմ, եւ դա պարզորոշ ցույց է տալիս Ադրբեջանի նպատակները՝ Լ. Ղարաբաղի դեմ նրա վարած պատերազմում»: Երեկ կայացած մամուլի ասուլի ժամանակ այսպես բնութագրեց ղարաբաղյան վերջին իրադարձությունները Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանը:

Անդրադառնալով Ադրբեջան-Ղարաբաղ-Հայաստան-Ռուսաստան բարձր մակարդակի քառակողմ հանդիպման հնարավորությանը, պրն. Աբրահամյանը նշեց, որ այսօր այդ առթիվ չկան հստակ պայմանավորվածություններ, թեեւ Հայաստանը սկզբունքորեն կողմ է նման գաղափարին, սակայն գտնում է, որ հանդիպումը պետք է նախապատրաստվի նախ փորձագետների, դիվանագետների, այնուհետեւ արտգործնախարարների մակարդակով: Հենց դրանով էլ փաստորեն բացատրվում է այն ուշադրությունավեստությունը, որով բնորոշվեց շաբաթ օրը Թբիլիսիում Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարների հանդիպումը:

Նախագահի մամուլի քարտուղարը տեղեկացրեց նաեւ, որ դիվանագիտական շփումները շարունակվում են, եւ դեսպան Կազիմիրովն այդ նպատակով գտնվում էր Բաքվում (պրն. Աբրահամյանի խոսքերով, այդ այցը բացատրվում է նրանով, որ Հայաստանը եւ Ղարաբաղը որեւէ խնդիր չունեն միջնորդական առաքելությունների հարցով, եւ խոչընդոտը Բաքուն է): Ի դեպ, ըստ նրա, այդ հանգամանքը հստակորեն նշված է Ռուսաստանի ԱԳՆ բանբեր Անատոլի Կարասինի հայտարարության մեջ, որը «գրում է այն մտավախությունները, թե Ռուսաստանը փոխել է իր դիրքորոշումը ղարաբաղյան խնդրում: Իրողությունն այն է, որ Ռուսաստանն իսկապես անաչառ է այդ հարցում եւ անկեղծորեն շահագրգռված է արյունահեղության դադարեցման մեջ»: Ա. Բ.

ԱԱՊՎ-ը վերակառուցվում է

ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հունվարի 14-ի հրամանագրով Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության վարչությունը պետք է ենթարկվի վերակազմավորման: Ըստ նախագահի հրամանագրի, լուծարվել են ԱԱՊՎ բոլոր օպերատիվ ծառայությունները եւ կասեցվել դրանց ծառայողների գործունեությունը, որոնց եռաստյան աշխատավարձը պահպանվում է: Վարչության կազմում պահպանվում են ՀՀ պետական սահմանի պահպանության գլխավոր վարչությունը, ինչպես նաեւ ռեժիմային, տեխնիկական, ֆինանսատնտեսական եւ բժշկական ծառայությունները:

Վարչության պետի պաշտոնից ազատվել է էդուարդ Սիմոնյանցը: Նրա պարտակոնությունները կատարելու է վարչության պետի պաշտոնակատար նշանակված Դավիթ Շահնազարյանը, որը մինչ այդ ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպանն էր: Նրան հանձնարարված է երեք ամսվա ընթացքում անցկացնել Ազգային անվտանգության վարչության աշխատակիցների որակավորում, ինչպես նաեւ կառավարությանը ներկայացնել ԱԱՊՎ կանոնադրությունը եւ կառուցվածքը: Տես էջ 8

ՂԱՐԱԲԱՂ

Հակառակորդի օդուժը փորձում է ռմբակոծել Ստեփանակերտը

Զինված բախումներ աֆղան մոջահեդների եւ վարշկան ռուսների միջեւ

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 17 ՀՈՒՆՎԱՐ: Այսօր ամբողջ օրվա ընթացքում ադրբեջանական բանակը ձեռնոպահ է մնացել ակտիվ հարձակողական գործողություններից, ինչպես տեղեկացրին ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբից: Օրվա երկրորդ կեսին զանգվածային հրթիռահրետակոծության են ենթարկվել հայկական բանակի դիրքերը Մարտակերտի շրջանի Մաստաղիս (Հակոբ Կամարի), Աղդամի շրջանի Գյոլ Թափա գյուղի եւ Մարտունու ու Ֆիզուլու շրջաններում: Ղարաբաղյան կազմավորումները դիմել են պատասխան գործողություններ: Երկուսից կան տուժածներ, որոնց թիվը ճշտվում է:

Այսպես ադրբեջանական ռազմաօդային ուժերին պատկանող գրոհային 3 ինքնաթիռ փորձել են ռմբակոծել Ստեփանակերտը, սակայն հակաօդային պաշտպանության ուժերի հստակ գործողությունների շնորհիվ փախուստի են դիմել: Շաբաթ օրը, ադրբեջանական գրոհային օդանավերը ռմբակոծել էին մայրաքաղաքը, բարեբախտաբար առանց զոհեր խլելու:

Մյուս կողմից, ռազմագերի Գուլամով Էլման Խալիլօղլիի վկայությամբ, վերջերս ադրբեջանական բանակում հաճախակի են դարձել զինված բախումներ աֆղան մոջահեդների եւ ռուս վարձկանների միջեւ: 1967 թ.-ին ծնված, Բաքվի բնակիչ Գուլամովի կարծիքով, այդ բախումների դրդապատճառ է հանդիսանում շուրավիների (աֆղաններն այդպես եւ կոչում ռուսներին) նկատմամբ հավասարազոր տեսնելու ցանկությունն այն մոջահեդների, ովքեր հարազատներ են կորցրել 80-ական թթ-ի աֆղան-խորհրդային պատերազմի ընթացքում:

Գնդակոծվել են Կրասնոսելսկը եւ Իջեւանը

Հայաստանի սահմանամերձ շրջաններում երեկ եւ նախորդ գիշեր համեմատաբար հանգիստ է եղել: Ավելի վաղ՝ հունվարի 15-ի երեկոյան ականանետներից եւ գնդացիրներից գնդակոծվել են Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Այս մասին տեղեկացնում են Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Միաժամանակ տանկերից հրետակոծվել է Կրասնոսելսկ շրջկենտրոնը: Նույն օրը Ղազախի շրջանի տարածից գնդակոծվել են Իջեւանի շրջանի Ոսկեւան գյուղի հայկական դիրքերը: Այստեղ նույնպես տուժածներ չեն եղել: Բոլոր դեպքերում հայկական սահմանապահ ուժերը դիմել են պատասխան համարժեք գործողությունների: ■

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ելցինը ընդունեց Գայդարի հրաժարականը

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ռուսաստանի իշխանության առնչությամբ արտասահմանյան մամուլում առավել աչքույժ մեկնաբանություններ է հարուցել Եգոր Գայդարի հրաժարականի դիմումը:

«Թայմզ» գրում է. «Գայդարի վճիռը խոր մտահոգություն կդյուռեցնի Արեւմուտքի կառավարություններին եւ ֆինանսական կազմակերպություններին, որոնք արդեն անհանգստացած են Ռուսաստանում բարեփոխումների հեռանկարների առնչությամբ: Ներկայումս կառավարությունը գրեթե հաստատ կդանդաղեցնի բարեփոխումների ընթացքը, որի օգտին հանդես է գալիս վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը»: Միաժամանակ թերթը գնահատում է ֆինանսների նախարար Բ. Ֆյոդորովի հարցազրույցը, որը հայտարարել է, որ ինքը նույնպես հրաժարական կտա, եթե կառավարության մեջ պաշտոնը պահպանի Կենտրոնական բանկի վարչության նախագահ Գերասչենկոն: Նախարարը նշել է, որ ինքը Գայդարի պես դեմ է եղել Ռուսաստանի ու Բելառուսի ֆինանսական համակարգերի միավորման համաձայնագրին, ասելով, որ կփորձի փոփոխություններ մտցնել այդ համաձայնագրում:

«Դեյլի թելեգրաֆ» գրում է. «Գայդարի հրաժարականը բողոք է Ռուսաստանի բարեփոխումների ծրագրի մեղմացման դեմ, եւ այդ քայլը կխրախուսի Արեւմուտքի ֆինանսիստներին: Սակայն ընտրություններից հետո նախագահ Ելցինն իրեն պարտավորված է զգալու սպառազինվելու Չեռնոմիրդինի առավել չափավոր հայացքներով, որը տնտեսական քաղաքականության փոփոխման կոչ էր անում, գտնելով, թե «ցնցաբուժումը» ձեռնտու է եղել Ժիրինովսկուն: «Դեյլի Էքսպրես» թերթը գրում է, թե Գայդարի հեռանալուց հետո տեղի կունենա ռուբլու փխարժեքի նոր զգալի անկում, ինչն արդեն կատարվեց երեկ Մոսկվայում: Նախագահ Ելցինը երեկ ընդունեց Գայդարի հրաժարականը, գովեստի խոսքեր շռայլելով նրա հասցեին:

ՍԱՐԵՐՔ

Մեծ երկրաշարժ Լոս Անջելեսում

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 17 ՀՈՒՆՎԱՐ, BBC, VOA: Այսօր, Երեւանի ժամանակով ժամը 16.04-ին ուժգին երկրաշարժ պատահեց Հարավային Կալիֆորնիայում, հատկապես Լոս Անջելեսի շրջանում: Ռիխտերի սանդղակով 6,6 բալանոց ստորերկրյա ցնցումները անակնկալի բերեցին շրջանի բնակչությանը, որն այդ ժամին դեռեւս անկողնում էր գտնվում: Քաղաքի տարբեր շրջաններում ուժգին պայթյուններ լսվեցին եւ առաջացան հրդեհներ, բազմաթիվ շենքեր ճեղքվածքներ ստացին, մինչ կամուրջների քանդումները պատճառ դարձան երթեւեկության մեծ խցանումների: Խուճապի մատնված բնակչության անձկությունն առավել սաստկացավ էլեկտրական հոսանքի եւ հեռախոսակապի ընդհատման պատճառով: Ընդհանուր խառնաշփոթից օգտվեցին կողոպտիչները, որոնք բազմաթիվ խանութներ ենթարկեցին կողոպտության: Հրեշջնեն ու շտապօգնության մեքենաները սուրում էին ամեն ուղղությամբ, մինչ ոստիկանությունը փորձում էր կարգուկանոնը վերահաստատել քաղաքում եւ արվարձաններում: Լոս Անջելեսի քաղաքապետ Պիտ Ուիլսոնը վաղ առավոտյան հրաժարակեց մի հրամանագիր, որով արտակարգ դրություն է հաստատվում քաղաքում, ու թեեւ դեռեւս չի դիմել դաշնակցային օգնության, սակայն արդեն իսկ բժշկական եւ այլ կարգի օգնություններ սկսել են հասնել: Լոս Անջելեսի գլխավոր օդակայանն ընդհատեց իր աշխատանքները: Առաջին ցնցումին, որը տեւել էր 35-40 վայրկյան, հետեւեցին շուրջ 20 ցնցումներ: Նախնական տվյալներով, զոհերի եւ տուժածների թիվը մեծ չէ՝ առայժմ 3 սպանված եւ 30 վիրավոր, սակայն դեռեւս շատ է շենքերի եւ շինությունների ներսում արգելափակվածների թիվը: Մինչ թերթը տպարան հանձնելու ժամանակը երկրաշարժի հետեւանքների մասին նոր տեղեկություններ հասնում էին: Սպասվում են հետերկրաշարժային նոր ցնցումներ, որոնց ուժգնությունը կարող է հավասարվել առաջինին: BBC-ի թղթակցի կարծիքով, վերջին 20 տարում Լոս Անջելեսում ամենամեծ երկրաշարժն էր այս մեկը: ■

ՕՐԵՎ

Ասադ-Քլինթոն հանդիպումը

Հակասական գնահատականներ

Կիրակի օրը Ժնեւում, նախատեսված 2 ժամի փոխարեն գրեթե 5 ժամ տեւեց Մ. Նահանգների նախագահ Բ. Քլինթոնի հանդիպումը Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի հետ Մերձավոր Արեւելքում խաղաղության գործընթացն առաջացնելու Իսրայելի հետ Սիրիայի հողային մնցի կարգավորման շուրջ: Մ. Նահանգների նախագահն իր հանդիպումը գնահատեց իբրեւ կարեւոր քայլ հարցի խաղաղ լուծման ճանապարհին: Նրա խոսքերով, հանդիպումը «շատ կառուցողական» բնույթ կրեց, որի ընթացքում Սիրիայի նախագահը՝«առաջին անգամ որակապես նշեց, թե ուզում է դադարեցնել Իսրայելի հետ բնամական վիճակը: Նա հայտարարեց նաեւ, թե ԱՄՆ-ը կարող է ճնշության առնել չեզոքացված Գոլանի բարձունքներ զորք ուղարկելու հարցը՝ խաղաղամոր առաքելությամբ: Իր հերթին, նախագահ Ասադն ընդգծեց, թե Սիրիան ամեն ինչ անում է շրջանում հավատարիմակ խաղաղ կարգավորման հասնելու համար: Հանդիպումից հետո նախագահ Քլինթոնն իր երկու բանագնացներն ուղարկեց Իսրայել, տեղյակ պահելու խոսակցության արդյունքների մասին: Բանագնացներից Դենիս Ռոսսին ընդունելուց հետո, Իսրայելի ԱԳՆ նախարար Շիմոն Պերեսը «բաց լեռնական» գտավ Ասադ-Քլինթոն հանդիպումը, մինչ իսրայելական մամուլի կարծիքը խիստ վերապահ էր այդ մասին, գտնելով, որ «նախագահ Ասադը որեւէ նոր բան չավելացրեց իր ավանդական տեսակետների վրա»: Բայց բոլորը լավ հասկանում են, որ առանց Սիրիայի հետ համաձայնվելու, Իսրայել-ՊԱԿ պայմանավորվածությունը կմնա լոկ իբրեւ բարի ցանկություն: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՈՍԿ

Հանրաքեսական վարչությունում

Հունիսի 13-ին կայացավ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրաքեսական վարչության նիստը, որը ընտրության առավ Քաղաքացիական համաձայնության Սահմանադրական խորհրդում ընտրվող խնդիրների, ՀՀ ԳԽ ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության նախագահի ընտրությունների, «Ազգ» թերթի մի հաղորդման եւ ընթացիկ հարցերի: Դրանց շուրջ զեկուցումով հանդես եկան Ռուբեն Միրզախանյանը եւ Կարեն Կոսանդյանը: Հանրաքեսական վարչությունը հաստատեց Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության «Տեղական ինքնակառավարում» գլխում, հանրաքեսության նախագահին եւ Ազգային ժողովին վերաբերող բաժիններում առաջարկվող փոփոխությունները: ՀՀ ԳԽ ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության նախագահի ընտրություններին վերաբերող հարցի կապակցությամբ որոշվեց հանձնարարել խմբակցությանը սեղմ ժամկետում անցկացնել նախագահի ընտրություն: Ինչ վերաբերում է «Ազգ» թերթում ՀՀ ներքին գործերի նախարարի հետ հրապարակված (հունվարի 12-ի համարում) հարցազրույցին կցված խմբագրական խոսքին, վարչությունն իր անհամաձայնությունը հայտնեց «պետական մարդու, քաղաքական գործչի կայացման» մասին այնտեղ տրված գնահատականին, իբրեւ բացարձակ չափազանցություն: Ընթացիկ հարցերում լսվեց ՀՌԱԿ գրասենյակի վարիչ Վայազան Գալստյանի հաղորդումը մամուլի դժվարություններին առնչվող խորհրդակցության նախապատրաստական ընթացքի մասին:

Սիս հերթական նիստը

Հունվարի 17-ին ՀՌԱԿ Հանրաքեսական վարչության գրասենյակում տեղի ունեցավ ՍԻՍ հերթական նիստը: Այն վարում էր ՀՌԱԿ Հանրաքեսական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը: Սահմանադրական խորհրդի նիստում քննարկվեց եւ ընդունվեց դատական իշխանություններին վերաբերող գլուխը: Խորհուրդն անդրադարձավ նաեւ հանրաքեսության նախագահի եւ Ազգային խորհրդի ընտրությանը առնչվող բաժիններին: Քննարկվեցին նաեւ կազմակերպչական մի շարք հարցեր:

Հաջորդ նիստը կայանալու է ՍԻՍ գրասենյակում: ■

ԴԱՐՍԲԱԳ

Թշնամու վերջին ճիգերը մնում են անարդյունք

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Շաբաթ եւ կիրակի օրերին իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում շարունակում էր մնալ ծայրաստիճան լարված: Հունվարի 15-ին ռազմական գործողություններն ընթանում էին հիմնականում ռազմաճակատի արեւելյան հատվածում Աղդամի շրջանի Գյոյթափա գյուղի ուղղությամբ, որտեղ ադրբեջանական կազմավորումները մոտ 15 ժամ շարունակ հրետակոծում էին հայկական դիրքերը: Այս ուղղությամբ՝ ծանր մարտերը ընթանում էին հունվարի 15-ի ամբողջ օրվա ընթացքում: Նույն օրը ադրբեջանական մի քանի ռազմական ինքնաթիռներ խախտել են Ղարաբաղի օդային սահմանը եւ ռմբակոծել Ստեփանակերտի բնակելի թաղամասերը: Տուժածների մասին տեղեկությունները ճշտվում են: Որոշ տվյալների համաձայն, ԼՂՀ հակաօդային պաշտպանության ուժերին հաջողվել է դյուսասխան կրակով ոչնչացնել թշնամու ինքնաթիռներից մեկը:

ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբից ստացված տեղեկությունների համաձայն, հաջորդ օրը՝ հունվարի 16-ին, ադրբեջանական կազմավորումները վերսկսել են լայնածավալ գրոհը երեք հիմնական ուղղություններով՝ հյուսիս-արեւելքում (Մարտակերտի շրջանի Մատաղիս եւ Հակոբ-Կամարի գյուղերի ուղղությամբ), Աղդամի շրջանի Գյոյթափա գյուղի ուղղությամբ եւ հարավ-արեւելքում՝ Ֆիզուլու հատվածում: Հյուսիս-արեւելքում ծավալված մարտերի ընթացքում դարաբաղյան ուժերին հաջողվել է լիովին կասեցնել թշնամու գրոհը եւ ոչնչացնել ավելի քան 30 զինվոր: Նախնական տվյալներով, հայկական կողմից զոհեր չկան: Ինչ վերաբերում է արեւելյան ճակատին, ապա այստեղ հունվարի 16-ին ադրբեջանական գրոհը, որին մասնակցում էր մի քանի տասնյակ միավոր զրահատեխնիկա, այդ թվում ծանր տանկեր, վերսկսվել է նոր կատաղությամբ: Այստեղ դարաբաղյան ուժերին հաջողվել է ոչ միայն լիովին կասեցնել թշնամու գրոհը, այլեւ անցնել հակահարձակման եւ թշնամուն հետ շղրտել մի քանի կմ: Ծանր մարտերի ընթացքում հայկական ուժերը ոչնչացրել են թշնամու 60-ից ավելի զինվոր, մեկ տանկ եւ մեկ հետեւակի մարտական մեքենա: Հայկական կողմից զոհվել է երկու, վիրավորվել 7 զինվոր: Թշնամուն չի հաջողվել առաջ շարժվել նաեւ հարավ-արեւելքում՝ Ֆիզուլու ուղղությամբ, որտեղ հակառակորդի բոլոր գրոհները կասեցվել են: Մանրամասնությունները ճշտվում են: Երեկ, վաղ առավոտյան, ռազմաճակատի բոլոր հատվածներում մարտերը վերսկսվել են: Ընդ որում, կրկին ակտիվացել են ադրբեջանական ռազմական ինքնաթիռները, որոնք երեկ առավոտյան փորձել են ռմբակոծել Ստեփանակերտը: Մանրամասն տեղեկություններ առայժմ չկան:

Վաղուց արդեն ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Ադրբեջանը վերջին ճիգերն է գործադրում փորձելով ուժերի գերազանցությամբ բեկում մտցնել պատերազմի ընդհանուր ընթացքի մեջ, ինչը առարացնում է Ղարաբաղի իշխանությունների վերջերս կայացրած այն որոշումը, որով զինակոչվում էին նաեւ ԼՂՀ 43-50 տարեկան տղամարդիկ: Ադրբեջանը, ռազմագերիների վկայությամբ, ռազմաճակաս է նետում արդեն 16-17 տարեկան դպրոցականներին, ինչը վկայում է, որ Ադրբեջանը նույնքան երկար չի կարող շարունակել այս պատերազմը, եւ գիտակցելով դա փորձում է նախքան բանակցությունները հնարավորին չափ մեծ ռազմական հաջողությունների հասնել: Այնքան որ, մեզ մնում է միայն նույնքան լարել ուժերը եւ դիմագրավել թշնամու ամենայն հավանականությամբ վերջին եւ դրանով իսկ վճռորոշ գրոհը:

ՀԱԿԻՐԲ

Հանդիպում են նախագահի հետ

Ըստ Ազգաբադում ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վրաստանի պետության ղեկավար էդուարդ Շեւարդնաձեի միջեւ կայացած հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության, հունվարի 15-ին ՀՀ նախագահին ընդունեց Վրաստանի Հանրապետության Ախալցխայի շրջանի վարչության նախագահ Ստեփան Ստեփանյանին:

Տեղի ունեցավ հանգամանալից զրույց՝ շրջանի իրավիճակի, Հայաստանի եւ Վրաստանի հարդրդակցական ճանապարհների եւ այլ հարցերի շուրջ:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ նախագահի խորհրդական Սամվել Գեւորգյանը եւ Հատուկ ծրագրերի պետական վարչության պետ Լեւոնարդ Պետրոսյանը:

Հայաստանում վալյուտային միջամտությունը կշարունակվի

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: Հայաստանի Կենտրոնական բանկը այսուհետեւ էլ մտադիր է վալյուտային միջամտություն կատարել հանրապետության արժույթի շուկայում: Այդ մասին հայտնեց Հայաստանի Կենտրոնական բանկի առաջին փոխնախագահ Արմեն Դարբինյանը: Նա նշեց, որ այսօր հանրապետությունում առկա է վալյուտայի մի քանի փոխարժեք, որոնք սահմանվում են կենտրոնական բանկի, Երեւանի ֆոնդային բորսայի եւ «սեւ շուկայի» կողմից:

«Մեր նպատակն է սահմանել միասնական շուկայական փոխարժեք, որտեղ գլխավոր դերը կիսակացվեր միջբանկային վալյուտային բորսային, որի ստեղծումը գտնվում է նախնական փուլում: Եւս մեկ բան. հարկավոր է, որ սակարանի ամուրդում սահմանված փոխարժեքն արտացոլի շուկայական օբյեկտիվ դինամիկան», ասաց Արմեն Դարբինյանը:

Արդյունաբերությունը խիստ անկանոն է աշխատում

Վառելիքաէներգետիկ ճգնաժամի հետեւանքով հանրապետության արդյունաբերության նախարարության համակարգի ձեռնարկությունների գործունեությունը էլեկտրամատակարարման 8-րդ ռեժիմի պայմաններում խիստ անկանոն է դարձել: Նախարարության լրատվական կենտրոնից տեղեկացանք, որ նախարարության համակարգի ձեռնարկություններից ներկայումս աշխատում են մոտ 60 ձեռնարկություն՝ այդ թվում՝ «Շողակն», «Սաֆիր» գործարանները, «Ավիահամալիր» գործարանը, «Արմենմոտոր» ֆիրման, Չարենցավանի հատոցաշինական գործարանը, Վանաձորի «Ավտոգենմաշ» գործարանը, Երեւանի կոմբինատների գործարանը: Ինչ վերաբերում է արտադրված արդյունքներին, ապա հունվարի 12-ի դրությամբ արդյունաբերության նախարարության համակարգի ձեռնարկությունները տվել են 44 միլիոն 191 հազար դրամի արտադրանք:

ԲԻԶՆԵՍ

Նյութական շահն էլ տեղ ունի, բայց...

ԳԱՅԱՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Այսօր շուկայական հարաբերությունների աշխույժ եռուզեռում գործարար ձեռնարկատերերը չեն սահմանափակվում միայն արտադրությամբ, զբաղվում են նաեւ կոմերցիայով: Գաղտնիք չէ, որ այդողիսի աշխատանքում փոքր չէ արտասահմանցի հայերի ավանդը:

Շնորհիվ սիրիահայ Գույումճյան եղբայրների Հայաստանում գործող «Արմենյան-ԱԿՇՆ» հայ-սիրիական համատեղ ձեռնարկությունը, որն արտադրում է մեքենաշինական «սարքավորումներ եւ զբաղվում կոմերցիայով, երկու տարվա ընթացքում հասել է մեծ հաջողությունների:

Պատահական չէր Գույումճյանների նախաձեռնած ցուցահանդեսվաճառը Դամասկոսում, որտեղ մեկ տարի առաջ ցուցադրվել են նաեւ հայկական հատոցներ, գեներատորներ, այլամենից դատարկված բազմաթիվ իրեր: Նրանց նպատակն էր Հայաստանը համաշխարհային շուկայում ներկայացնել որպես ակտիվ դրսեւորիչ մրցակից: Բացի արդյունաբերական գործունեությունից, եղբայրները հանրապետություն են առաքել նաեւ 67 տոննա ձեթ, 350 հատ նավթով աշխատող վառարան, տասնյակ տոննաներով ուսեստեղեն, իսկ Բելգիայից եւ Գերմանիայից ներմուծել են դրոշնձ եւ եվրոպական արտադրության հագուստ:

Թվում է, թե հետքայությամբ են իրականանում սիրիահայ գործարարների համարձակ քայլերը: Իրականում հարկ է լինում անցնել բազմաթիվ խանգարող հանգամանքների միջով (ինչպիսին է, օրինակ, Թուրքիան, որի փակ դռները խոչընդոտում են Հայաստան ուղղվող բեռների փոխադրումը՝ անտեսելով այս առնչությամբ աշխարհում գոյություն ունեցող տարանցիկ փոխադրումների անձեռնմխելիության օրենքը):

Այս ամենն, իհարկե, չի վախեցնում Գույումճյաններին: Անցյալ տարի Երեւանի «Հայ Կոնտրակտ» կազմակերպության միջամտությամբ եւ Դոր Գույումճյանի «Կոհանս» ֆիրմայի նախաձեռնությամբ գազի դրսերի դիմաց Ազգաբադ է ուղարկվել համադասասխան քանակությամբ կտրտեղեն: Որի ցավով է մտքերում դարձյալ Գույումճյանը մեր գիտնականների արտագաղթը արտասահման: Այն կասեցնելու համար հիմնել է «Օազան» բարեգործական միությունը՝ համախմբելով տաղանդավոր հիմիկոսների, որոնք դեռ է իրենց գյուտերով նպաստեն Հայաստանի բարգավաճմանը: Նա դատապարտ է հովանավորել ցանկացողներին:

Ի՞նչն է հրաղարում այս կարգի գործունեության մեջ սիրիահայ ձեռներեցին: Նյութական, ֆինանսական շահը, թե՞... Անտարակույս, նյութականն էլ տեղ ունի, սակայն...

«Ինձ հոգեւորն էլ բավական է, ասում է Դոր Գույումճյանը: Վերջերս Հալեպի հայոց գերեզմանատունը զարդարելու կարգակցությամբ դատվիրել եմ չորս խաչքար՝ ի կարոտ հոգուս հանգստության»: ■

ԳՅՈՒՄՐԻ

Հանրահավաքը կազմակերպել էին կոմունիստները

ԳԵՂԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հիրավի, ժամանակները փոխվում են: Ակամա այս մտքին է բերում Գյումրիում անցած օրը՝ հունվարի 15-ին կոմունիստների կազմակերպած հանրահավաքը, որին այստեղ վերջին շրջանում ամենամեծ թվով (նվազագույնը 1.5 հազար) մարդ էր հավաքվել:

Հանրահավաքում ելույթ ունեցողները՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարդան Հախվերդյանը, ՀԿԿ Արթիկի շրջկոմի առաջին քարտուղար Պավել Գրիգորյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամ Ստեփան Ստեփանյանը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Լեոնիդ Հակոբյանը, Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Սերգեյ Բաղալյանը եւ ուրիշներ, խոսելով հանրապետությունում ստեղծված աննախադեպ ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, նշեցին, որ դա հետեւանք է ներկա իշխանությունների վարած անհեռատես ներքին եւ արտաքին քաղաքականության: Որպես դրա առավել ակնառու արտահայտություններ նշվեցին հողի եւ անասունների անհեռատես սեփականաշնորհումն ու փոշեցրումը, անասնագլխաքանակի ջարդը, արդյունաբերական օբյեկտներն անգործության մատնելն ու մեծ թվով մարդկանց գործազուրկ բողնելը, դրամաշրջանառության կազմակերպման ձախողումն իր ծանր հետեւանքներով, շարունակվող պատերազմն ու աղետի գոտու նկատմամբ անտարբերությունը, ծաղկեցնող բուրմամբ քաղաքականությունը: Ասվեց, որ այս ամենը, ինչպես նաեւ հանրապետությունում արդեն մեծ չափերի հասնող չարաշահումները, կաշառակերությունը, հանցագործությունները, մաֆիոզ խմբերի գործունեությունն այսօր պատճառ են դառնում ոչ միայն ժողովրդի ծայրաստիճան թշվառ ու անպաշտպան վիճակի, այլեւ հանրապետությունից զանգվածային արտագաղթի, մեր գենոֆոնդի կորստի:

Հանրահավաքում ժողովրդին սահմանադրական բոլոր ընդունելի միջոցներով քաղաքական գործուն պայքարի կոչ արվեց: Այդ պայքարի առաջնահերթ նպատակները համարվեցին հանրապետության նախագահի եւ կառավարության, ինչպես նաեւ Գյումրիի քաղգործկոմի ղեկավարների անհապաղ հրաժարականն ու նոր ընտրությունների անցկացումը, ազգային համաձայնության կառավարության ստեղծումը՝ նրա կազմում մարդկանց ընդգրկելով միայն ըստ նրանց անձնական հատկանիշների, Ռուսաստանի հետ ռազմական, տնտեսական եւ քաղաքական սերտ դաշինքի եւ համագործակցության ստեղծումը, տիրության տարածքային եւ արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման արգելումը, հողի առք ու վաճառքի օրենքը չեղյալ հայտարարելը: Ընթերցված եւ քվեարկության դրված մոտավորապես այս բովանդակությամբ որոշման նախագիծը հանրահավաքի մասնակցներին հավանությանն արժանացավ եւ, ինչպես հայտարարվեց, ընդունվեց միաձայն: ■

ՍԵՆՍԱՍԹԵՐՔ

Ներմուծումն ավելացե՞լ է

Մեկ ամիս առաջ Հայաստանի նախագահը ստորագրեց հրամանագիր՝ ուղղված սենդամքերքի ներմուծման եւ վաճառքի բարենպաստ պայմաններ ստեղծելուն: Եւ ահա երեկ կայացած մամուլի ասուլիսում նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանն անդրադարձավ այդ հրամանագրի կատարման ընթացքին նշելով, որ նախագահի վերահսկողական ծառայությունը օրերեսիվ վերահսկման խումբ է ստեղծել «Զվարթնոց», «Էրեբունի» եւ «Շիրակ» օդանավակայաններում:

Պրն. Աբրահամյանը նշեց, որ դեկտեմբեր ամսին նոյեմբերի համեմատ բեռնատար ինքնաթիռների մուտքը Հայաստան ավելացել է 11 տոկոսով, իսկ օդային ճանապարհով սենդի ներմուծումը մոտ 5 անգամ: Նույն ճանապարհով բենզինի ներկրումը 6,6 տոկոսով: Այս ամենը, ըստ նրա, որոշ չափով նպաստել է բենզինի գնի նվազմանը եւ դրամի կուրսի կայունացմանը: Ստուգումների արդյունքում հայտնաբերվել են դրամատարանային շորթումների եւ պատշաճական դիրքի չարաշահումների մի շարք դեպքեր, հարուցվել են քրեական գործեր: Հունվարի 14-ից օդերեսիվ արագանման խմբերը վերսկսել են իրենց աշխատանքը ոչ միայն նշված օդանավակայաններում, այլեւ Հայաստանի հյուսիսային եւ հարավային ավտոմայրուղիներում:

Ա. Բ.

ՈՒՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրէն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / 562863
Ոճը եւ տարածները ՊԱՌԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆԻ
Apple® Macintosh® համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co., 22122 Sherman Way, Suite 203, Canoga Park, CA 91303, Call (818) 598-0423 Fax: (818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian - Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian - Վարդան Գարաղլանեան
Production Manager - Raffi Shoubookian
Արտադրութիւն Ռաֆֆի Շուտուրեան
«ԱԶԳ» օրաթերթը հարդարվում է ԱՄՆ «ԱՐՍԻԱՆ» ՍՊԸ-ի համակարգչային կայով
Հեռախոս. 7 8852 281425, Ֆաքս 7 8852 285082
E-MAIL INTERNET: ROOT. YEREVAN @ REX. IASNET. COM

digitised by A.R.A.R.@

ԱՀՁ

ՇՐՋԱՆ, ԱՊՇ

ՎՐԱՍՏԱՆ

Առանց Ռուսաստանի Աբխազիայում խաղաղություն չի լինի

ԹԲԻԼԻՍԻ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՄՆԱՐՔ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ռուսաստանն Աբխազիայում խաղաղության հաստատման վճռական գործոնն է», ասվանդական ռադիոհարցազրույցում հայտարարեց Էդուարդ Շեւարդնաձեն: Դրականորեն գնահատելով Ժնեւում կայացած վրաց-աբխազական բանակցությունների երկրորդ փուլի արդյունքները, որտեղ վերջնականապես որոշվեցին գաղթականների վերադարձի ժամկետները, Վրաստանի ղեկավարը կրկին ընդգծեց, որ խնդրի նկատմամբ միայն Ռուսաստանի կառուցողական մոտեցումը կարող է վերջ դնել Աբխազիայի դիմակայությանը:

Անդրադառնալով Ֆրանսիա կատարելիք այցին, Շեւարդնաձեն խոստովանեց, որ ինքը դրանից շատ բան է ակնկալում:

Ինչպես հայտնի է, Վրաստանի ղեկավարը հունվարի 20-ին երկօրյա այցով կմեկնի Փարիզ: Պատվիրակության կազմում կլինեն փոխվարչապետ Իռակլի Մենագարիշվիլին, արտգործնախարար Այեխանդր Չիքվաիձեն, պետության ղեկավարի աշխատակազմի եւ արտգործնախարարության աշխատողներ: Այցի նպատակն է բարեկամության ու համագործակցության պայմանագրի ստորագրումը: Պայմանագրով նախատեսվում են համագործակցություն ու խորհրդակցություններ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի մակարդակներով:

Այցի ընթացքում Շեւարդնաձեն Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի հետ կստորագրի Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիան, հանդիպումներ կունենա ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի արտակարգ ներկայացուցիչ [illegible] Բրունների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղար Մայորի եւ արտաքին առեւտրի բանկի ու ֆրանսիացի գործարարների ընկերակցության նախագահ Միշել Գրեյշելիի հետ:

Դրա հետ մեկտեղ Վրաստանի ղեկավարն իր ռադիոհարցազրույցում ընդգծեց, որ ինքը ռուբլու գոտու հարցում վերջնականապես կկողմնորոշվի միայն Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, միջազգային վալյուտային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի մասնագետների հետ մանրամասն խորհրդակցելուց հետո: «Նրանց հանձնարարականներից կախված կլինի Վրաստանի ռուբլու գոտի մտնելը», հայտարարեց Էդուարդ Շեւարդնաձեն:

Մինչ այդ Շեւարդնաձեն [illegible]վարի 14-ին հանդիպում էր ունեցել ամերիկյան «Շուման ինստիտուտը» ֆիրմայի նախագահ Հարի Գոցմանի հետ: Քննարկվել էին Վրաստանի մայրաքաղաքում նոր տիպի հեռախոսակապի ստեղծման հարցերը:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Վախթանգ Գոգուաձեն ուրբաթ, հունվարի 14-ին հայտարարեց, թե «Հարկավոր է վերականգնել Ռուսաստանի եւ Վրաստանի ավանդական լավ հարաբերությունները»:

«Մենք ամեն ինչ անում ենք Ռուսաստանի հետ տնտեսական ու քաղաքական [illegible] ունենալու հարկաց սեր [illegible] մար: Եթե դա չհամապատասխանա Վրաստանի շահերին, մենք չէինք անդամակցի ԱՊՀ-ին եւ չէինք մտածի ռուբլու գոտու մասին», ասաց նա:

Անդրադառնալով տնտեսական կապերին, Գոգուաձեն նշեց, որ «Վրաստանը կարոն է Ռուսաստանի եռանդուն եւ իրական տնտեսական օգնությանը»:

Այնուամենայնիվ, ինչպես երեկ հաղորդեց Նոյյան տապան գործակալությունը Թբիլիսիից, Վրաստանի տրանսպորտային ծառայությունների անցկացրած կայծակնային հարցման համաձայն, երկրի բնակչության 34 տոկոսը Վրաստանի իրավիճակը համարում է դայթյունավտանգ: Մասնակիցների 52 տոկոսը իրադրությունը համարել է լարված, 12 տոկոսը դժվարացել է դատասխանել եւ միայն 2 տոկոսն է վիճակը միանգամայն բնականոն համարել:

Ճգնաժամից դուրս գալու երկչոտ քայլեր արեց Վրաստանի կառավարությունը: Հունվարի 15-ից Վրաստանում 100 տոկոսով բարձրացվում է բյուջետային կազմակերպությունների ու հիմնարկների աշխատողների աշխատավարձը: Աշխատանքի վարձատրության նվազագույն մակարդակը կկազմի ամսական 50 հազար կուպոն, որ ներկա փոխարժեքով 300 ռուսական ռուբլուց դակաս է:

150 տոկոսով կավելացվեն կենսաթոշակները, գործազուրկներին ու գաղթականների տվող նպաստները: Նաեւ որոշված է բարձրացնել ուսանողների կրթաթոշակները եւ բնակչության սակավ ունեւոր խավերին տվող օգնության չափերը:

Այդ նպատակով Վրաստանի նախարարների կաբինետի որոշմամբ հատկացվել է 80 միլիարդ կուպոն: Սակայն ներկա արժեզրկման դայմաններում ձեռնարկված քայլը միայն [illegible] բանով կարող է թեթեւացնել սարսափելի կյանքը, որոնց մեծ մասն աղքատության մեջ: Մտահոգվելու եթե նկատի ունենանք, որ բացի հացից եւ նորմավորված մթերքներից, կուպոնով անհնար է որեւէ բան գնել:

ՍԱՐԲԵՋԱՆ

Նախատրաստվում են գաղթականների զանգվածային վերադարձին

ԲԱԿՈՒ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ, ՄՆԱՐՔ: Ինչպես Խաբար սերվիսին հայտնեցին Ադրբեջանի կառավարության իրավասու աղբյուրները, ներկայումս Ադրբեջանի Նախարարների կաբինետը դատրաստվում է գաղթականների եւ տեղահանվածների զանգվածային վերադարձին: Նշվեց, որ գաղթականներն այժմ չեն ձգտում վերադառնալ հարազատ վայրեր, այլ նախընտրում են տեղավորվել հանրապետության այն բնակավայրերում, որոնք չեն գրավվել հայերի կողմից, բայց դրանց ադրբեջանցի բնակիչները հեռացել են: Այդ գյուղերը հիմնականում գտնվում են Ֆիզուլու շրջանում:

Մյուս կողմից, Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցների հայրենասիրական ոգին բնավ չի համապատասխանում այսօր այդ հանրապետությունում առկա իրադրություններին: Բաքվի հայավասի աղբյուրներից հայտնի դարձավ, որ ներկայումս հանրապետության մայրաքաղաքում իսկական որս է ծավալվել այն զինակոչիկների դեմ, որոնք չեն ուզում մասնակցել Ղարաբաղի դատերազմին: Նրանց «որսում են» մետրոյի կայարաններում, տրամվայներում, ավտոբուսներում, կինոթատրոններում, դարզապես քաղաքի փողոցներում:

Մինչդեռ Ստեփանակերտում դահվող ադրբեջանցի ռազմագերի, Ադրբեջանի Կուսակցության շրջանի բնակչի վկայությամբ, ռազմաճակատ են ուղարկվում հիմնականում 1949 տարեկան դատանիներին, որոնք միայն երկօրյա զինվորական դատրաստություն են անցել:

Այդ մթնոլորտն Ադրբեջանում հարուցում է այն ծնողների դժգոհությունը, որոնց զավակները որդես «թնդանոթի միս» են ուղարկվում Ղարաբաղ: Միայն վերջին ամսվա անդստող հարձակումների ընթացքում, ԼՂՀ դաշտանության բանակի տվյալների համաձայն, զոհվել են Ադրբեջանի մոտ երեքուկես հազար զինվոր եւ սպա: Եւ այս թիվը շարունակում է աճել:

Բաքվում դիտորդներ, այդ թվում, Ադրբեջանի Ժողովրդական ներկայացուցիչներ, գտնում են, որ իրադարձությունների նման ընթացքը հանգեցնում է նախագահ Ալիեւի քաղաքական վարկի անկմանը, որին այստեղ ընկալում են որդես ազգի փրկիչ:

Հատկանշական է, որ Ադրբեջանում հակադատերազմական տրամադրությունները հատկապես ուժեղացան Ռուսաստանի հեռուստատեսության «Ճշմարտության դահ» հաղորդման ընթացքում ԼՂՀ դաշտանության դեսական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթից հետո, որը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը դատրաստ է դադարեցնել դատերազմը եւ Հեյդար Ալիեւի հետ նստել բանակցությունների սեղանի շուրջը:

Մինչդեռ նախատեսված է հունվարի 21-22-ը Բաքվում անցկացնել բուրմաղեղու դեսությունների ղեկավարների հանդիպում, որի ընթացքում ակնկալվում է հայտարարության ստորագրում: Վերջինս կդառնա անցյալ տարի այդ երկրների նախագահների ստորագրած Անկարայի փաստաթղթի նմանակը: Այն կնախատեսի միջդետական լայն փոխհարաբերությունների հաստատում բոլոր ոլորտներում: ■

ՀԱՄԱՌՈՏ

ԲԵԼԱՌՈՒՍ

Ռուսական ու բելառուսական ռուբլիներ

ՄԻՆՍԿ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բելառուսի Հանրապետության ԳԽ նախագահ Ստանիսլավ Շուշկեւիչը Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հետ իր բանակցությունների գլխավոր արդյունքը համարեց բարեկամության ու համագործակցության նոր միջդետական ռուս-բելառուսական դայմանագրի մշակման անհրաժեշտության շուրջը ծեռք բերված դայմանավորվածությունը: Շուշկեւիչի խոսքերով, բանակցություններ կենտրոնում է եղել երկու երկրների դրամական համակարգերի առաջիկա միավորման հարցը: Ռուսաստանի նախագահը հավաստիացրել է, որ երկու կողմերի փորձագետների հաջող աշխատանքի դեդքում մինչեւ փետրվար Մինսկ կժամանի Ռուսաստանի կառավարության ղեկավար Վիկտոր Չեռնոմիրդինը՝ համապատասխան փաստաթղթերի ստորագրման համար: Բելառուսի փոխվարչապետ Վլադիմիր Զալոմայը դարզաբանեց մի կողմից Բելառուսի եւ մյուսից, Ղազախստանի ու Ուզբեկստանի միասնական ռուբլու գոտու ստեղծման նկատմամբ մոտեցումների սկզբունքային տարբերությունը: Եթե ասիական հանրապետություններն անհապաղ դահանջում էին ռուսական ռուբլիներ, ապա բելառուսական կողմը համաձայն է սկզբնական շրջանում բելառուսական եւ ռուսական ռուբլիների զուգահեռ շրջանառությանը:

ԷՍՏՈՆԻԱ

Բավարար ջանքեր չեն գործադրվել

ՏԱԼԼԻՆՆ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Էստոնիայի Պետական ժողովի դատգամավորության հանձնաժողովի նախագահ Ռեյն Հելմեի խոսքերով, Էստոնիան մինչեւ օրս բավարար ջանքեր չի գործադրել ՆԱՏՕ-ին անդամակցելու համար: Նա ասել է, որ շրջանային համագործակցության մի շարք խնդիրների առկայության, մասնավորապես ռուս-էստոնական սահմանի հարցի անորոշության դայմաններում, այդ դաշինքին անդամակցելու հեռանկարներն անիրական են: Հելմեն գտնում է, որ այդ խնդիրները հարկավոր է կամ շատ կարգով լուծել, կամ էլ դրանց ճնշարկումն անորոշ ժամկետով հետաձգել: Անդրադառնալով ՆԱՏՕ-ին անդամակցելու Լիտվայի խնդրանքին, Ռեյն Հելմեն հայտարարեց, որ այդ դեդքում առավել ճիշտ կլիներ ոչ թե բալթյան դետությունների նախագահների մակարդակով խորհրդակցությունը, այլ Լիտվայի, Լատվիայի եւ Էստոնիայի խորհրդարանների խորհրդակցությունը:

ՈՒԿՐԱԻՆԱ

Մանր կարբովանեցները հանվում են

ԿԻԵՎ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լվովի փողոցներում այժմ կարելի է տեսնել դատված եւ աղբարկղ նետված 3 եւ 5 կարբովանեցներ: Քաղաքացիներն այսդես են արձագանքում նոր տարվանից 1, 3, 5, կարբովանեցները շրջանառությունից հանելու Ուկրաինայի Նախարարների կաբինետի եւ Ազգային բանկի որոշումը: Ամենամանր դրամ կդառնա ուկրաինական չերվոնեցը: Հասարակական ավտոտրանսդորտում, առեւտրի կազմակերդություններում մանր փող չեն վերցնում: Բոլորն սդասում են նոր ազգային դրամի, թեեւ Ազգային բանկի նախագահ Վիկտոր Յուշչենկոն նախազգուշացրել է, որ գրիվնա չի մտցվի, քանի դեռ չի կայունացել կառավարության վիճակը: Մինչդեռ Ազգային բանկի դահեստարանները լեփ-լեցուն են գրիվնաներով: Դեկտեմբերի վերջին կանադայից եւ Անգլիայից, որտեղ տդագրվում է ուկրաինական փողը, ստացվել է բանկարժեք բեռի հերթական քանակը:

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

Նիյազովը կիշխի մինչեւ 2002 թ.

Շաբաթ օրը Թուրքմենստանում տեղի ունեցավ հանրաքվե, նախագահ Նիյազովին վստահություն հայտնելու կարդակցությամբ: Ինչպես եւ սդասվում էր, հանրաքվեի դաշտանական աղբյուրները հայտնեցին, թե քվեարկելու իրավունք ունեցողների բացարձակ մեծամասնությունը ներկայացել է քվեատուփ, որտեղ Նիյազովին դաշտանողների թիվը կազմել է 99,99 տոկոս: Նույն աղբյուրների համաձայն, ընդամենը 212 մարդ մայրաքաղաք Ասգաբադում դեմ է քվեարկել... Այսդիսով, նախագահ Նիյազովը ադահոված կլինի իր իշխանությունը եւս 7 տարով, մինչեւ 2002 թվականը:

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՖԻՐՄԱ

IMAC

Դուք բեռներ ունեք եւ ուզում եք տեղափոխել ԱՊՀ երկրներ կամ արտասահման՝ Խնդիր չէ:
Վերցրեք լսափողը եւ զանգահարեք
52-97-40 կամ 52-99-83

Հայ-իտալական «IMAC» ֆիրման երաշխավորում է.
- Ձեր բեռների տեղափոխում ցանկացած ուղղությամբ ամենասեղմ ժամկետում:
- Մեր ծառայությունները մատուցվում են անհամեմատ ցածր գներով:
- Վճարման ձեւը որոշում եք դուք:

Մեր ֆիրմայի Սավրոպոլի բազային օդակայանը կապահովի Ձեր բեռների պահեստավորումն ու դաշտանվածությունը:
Բեռնատեղափոխումները «ԻԼ-76» ինքնաթիռով
Ուղեւորների չվերթները «ԱՆ-24» ինքնաթիռով

Ուղիղ չվերթներ.
Երեւան-Սավրոպոլ-Երեւան
Երեւան-Վոլգոգրադ-Երեւան
Երեւան-Աստրախան-Երեւան

Դուք քարտ ունե՞ք. գրեք մեր հասցեն՝ 56-15-48: Նախընտրում եք փո՞սը: Սա մեր հասցեն. 375009, Իսահակյան 28
P. S. Գուցե Ձեզ անհրաժեշտ է ձեռք բերել սենդամքերք: Մեր ֆիրման կօգնի նաեւ այդ հարցում:

Սդասում ենք Ձեր դատվերներին
Դրանց կատարման հուսալիությունն ու ճշդությունը երաշխավորում ենք
Ձեր վստահելի գործընկերն է «IMAC» ֆիրման

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

Վերջին ժամանակներս հաճախ է խոսք բացվում այն մասին, որ ադրբեջանա-ղարաբաղյան առճակատման շրջանում ադրբեջանական կողմը մարտերին մասնակից է արել նաեւ աֆղան վարձկաններին՝ մոջահեդներին: Տեղեկացվել են այս իրողությունն աղաղակող լուսանկարներ եւ որոշ փաստաթղթերի ցանցեր: Դա որոշ տարակուսանքներ է առաջացրել արեւմյան տեղեկատվության միջոցներում գոյություն ունեցող մահմեդական համայնքների շրջանում, որոնք, իհարկե, միանշանակ վերաբերմունք չեն ցուցաբերել իրողության հանդեպ:

ՊԱՏԵՐԱԶՄ

Մոջահեդների կամակորությունը

ՄԱՐՍԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտ

Այսպես, Կանադայի մուսուլմանների առաջնորդը խիստ անհանգստացած է ղարաբաղյան պատերազմում աֆղանական մոջահեդ վարձկանների մասնակցությամբ: Աֆղանստանի նախագահին հղված նամակում Կանադայի մահմեդականներն իրենց վրդովմունքն են արտահայտել այդ առթիվ եւ պահանջել, որ Աֆղանստանի իշխանությունները արգելեն մոջահեդների հավաքագրումը: Այս մասին մեզ հաղորդել են Կանադայի հայ համայնքից եւ խնդրել իրենց վկայություններ, քանի որ իրենք չեն նրանք, ովքեր գտնում են, որ ղարաբաղյան կողմն այդ աղմուկը իբր բարձրացրել է զուտ քարոզչական եւ ադրբեջանական զինուժը միջազգային հանրության առաջ նսեմացնելու նպատակով:

Որ վարձկան մոջահեդներ են կռվում ադրբեջանական կողմից, բացարձակ ճշմարտություն է, սակայն ավելորդ չենք համարում դա հաստատել կոնկրետ փաստերով:

Այս գաղափարի իրականացումը կոնկրետ քայլերի է վերածվել անցյալ տարվա օգոստոսի սկզբներին, երբ փոխադարձանավորվածության համաձայն Ադրբեջանն ստացավ էր մոջահեդների մի սվար խմբի ժամանումը: Կասկած չի հարուցում, որ այդ գործարքը կնքվել է կառավարական բավական բարձր մակարդակով:

Արդեն 1993 թվականի օգոստոսի 19-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Ի. Ալիանովի եւ կազմակերպական-մոբիլիզացիոն վարչության պետ Ն. Կուլիեւի Ադրբեջանի հանրապետական զինկոմիսարին [illegible] հրահանգում ընթերցում ենք.

«Պահեստայիններից զորակոչել պարսկերենին տիրապետող 50 (հիսուն) զինապարտ բարգմանիչների եւ ուղարկել «Գերան» [illegible] կենտրոն թիվ 160 զինմասի հրամանատարի կարգադրության տակ»:

Մեր օրերի տակ գտնվող հաջորդ կարգադրությունն արդեն ստորագրում է թիվ 200 զինմասի շտաբի պետ, գեներալ-մայոր Ն. Սադրկովը: Այն կոչված է թիվ 160 զինմասի հրամանատար Լյաշիֆովին:

«1995 թվականի օգոստոսի 15-ին ժամանած «աֆղանցի» մարտիկներին, 522 (հինգ հարյուր քսաներկու) հոգու մտցնել զինմասի անձնակազմի ցուցակը եւ բաշխարարել ամեն ինչով»:

Փոխգնդապետ Լյաշիֆովը հրամանատարին հատուկ կարգապահությամբ հերթական զեկուցագրում գլխավոր շտաբին տեղեկացնում է այն մասին, որ թիվ 160 զինմաս են ներկայացել Ֆարսերենի 15 բարգմանիչներ՝ ինը ավագ լեյտենանտ եւ վեց լեյտենանտ: Սակայն պարզվում է, որ Ադրբեջանում զորակոչի հետ կապված հարցերն այնքան էլ հեշտ ու դյուրին չեն լուծվում: Բնականաբար մոջահեդներին բարգմանիչներով ապահովելու հարցը նույնպես ամբողջությամբ հնարավոր չեղավ լուծել: Այդ առթիվ բարձրագույն հրամանատարությանն ուղղած զեկուցագրում իր դժգոհությունն է հայտնում թիվ 160 զինմասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Ռ. Մամեդովը. «Զորակոչված պարսկերենի 50 բարգմանիչներից ծառայության վայր են ներկայացել 26-ը, որոնցից 13-ը ինքնակամ բողել են զինմասը»: Առաջարկում է որոնել դասալիքներին, հետ ուղարկել «Գերան» ուսումնաքաղաքական կենտրոն:

Որոշ ժամանակ անց, երբ վարձկան մոջահեդները ժամանակավոր ապաստան են գտնում «Գերան» ռազմուսումնական կենտրոնում, նրանց նկատմամբ ցուցաբերվում է առանձնահատուկ վերաբերմունք եւ հոգատարություն: Կարելի է ենթադրել, որ Ադրբեջանի զինուժի ղեկավարությունը մեծ հույսեր է կապում մոլեռանդ ռազմամոլների հետ, նպատակ ունենալով նրանց ներկայությամբ եւ միջոցով պատված բարձրության հասցնել բարոյալքված բանակի մարտական ոգին: Այս առումով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ծեռի տակ ունեցած փաստաթղթերը վկայում են այն մասին, կարծես մոջահեդները գտնվում են ոչ թե գործող բանակում, այլ Նավթալանի առողջարանում, որովհետեւ սննդի այն օրաբաժինը, որ ստանում են նրանք, կարող է նախանձել ամենաբարձրակարգ առողջարանը:

Թիվ 160 զինմասի բիկունիի գծով հրամանատարի տեղակալի՝ 460 հոգու սնունդն ապահովելու նպատակով ներկայացված հայտում պահանջվում է կաթ, մածուն, կենդանի հավեր, փլավ եփելու համար անհրաժեշտ համեմունքներ, էլեկտրական մսաղաց, կանայի, բուլղարական թարմ պղպեղ, մրգեղեն՝ խաղող, տանձ, խնձոր, դեղձ, նախաճաշի համար՝ կանաչ լոբի, բադրիջան, վարունգ, կարագ, շաքար եւ շարավազ, խմորեղեն, տավարի պահածոյացված միս, տավարի մսից երշիկ, կենդանի ոչխարներ եւ այլն:

Ուշադրություն դարձնենք 460 թվին: Բայց չէ՞ որ նրանք 522 հոգի էին: Ուր մնացին 62 մոջահեդները: Գուցե նրանք նույնպես համալրել են Ադրբեջանի ազգային բանակի դասալիքների շարքերը: Պարզվում է, որ մոջահեդները ասիրը բաց չեն թողնում դիմելու բժիշկներին: Արդյունքում նրանց մի զգալի մասը հայտնվում է Գյանջայի հոսպիտալում:

Նույն Լյաշիֆովի բարձրագույն հրամանատարությանն ուղղված զեկուցագրում տեղեկացվում է այն մասին, որ աֆղան մոջահեդների «Գերանում» գտնվելու շրջանում սանմաս կատարած այցելությունների հաճախականությունը կազմել է 1356 մարդ, հոսպիտալացվել են 41-ը: «Այն տպավորությունն է ստեղծվում, որ նրանք մեզ մոտ են եկել բուժվելու եւ ոչ թե կռվելու նպատակով», գրում է զինմասի հրամանատարը:

Մոջահեդների կամակորությունն ասիճանաբար լայն ծավալներ է ընդգրկում: Ավելին, նրանք էլ իրենց հերթին բողոքում են թիվ 200 զինմասի հրամանատարությանը եւ առաջ քաշում մի շարք պահանջներ: Նրանք դժգոհում են սպասարկման մակարդակից, պատկերացնո՞ւմ եք, զինվորական հրամանատարությունը նրանց մարդատար մեքենաներ չէր տրամադրում դեպի 9-անջա, Մինգեչաուր եւ այլ քաղաքներ զբոսանքի եւ շրջագայության մեկնելու համար: Հրաժարվում են ծխել առանց ֆիլտրի սիգարետներ, դժգոհում են փլավի, տրամադրվող թեյի որակից, որը գիշում է Ցեյլոնի թեյին, բժիշկների սպասարկման մակարդակից, հիշեցնելով, որ առանց բարձ ծվի անհնար է ապահովել մարտական կեցվածքը:

Մեզ արդեն ծանոթ Գյանջայի գեներալ-մայոր Սադրկովը թիվ 160 զինմասի հրամանատարությունից պահանջում է անհապաղ միջոցներ ծեռնարկել մոջահեդների պահանջները բավարարելու համար:

Իսկ քանի գնում, նոսրանում են նրանց շարքերը, հասնում մինչեւ 305-ի: Մեծանում է հոսպիտալում բուժվելու գայթակղությունը: Հավանաբար մոջահեդները, ծանոթանալով իրադրությանը, սկսում են հասկանալ, որ սա Աֆղանստանը չէ, իրենց կանայի, բուլղարական թարմ պղպեղ, մրգեղեն՝ խաղող, տանձ, խնձոր, դեղձ, նախաճաշի համար՝ կանաչ լոբի, բադրիջան, վարունգ, կարագ, շաքար եւ շարավազ, խմորեղեն, տավարի պահածոյացված միս, տավարի մսից երշիկ, կենդանի ոչխարներ եւ այլն:

Ուշադրություն դարձնենք 460 թվին: Բայց չէ՞ որ նրանք 522 հոգի էին: Ուր մնացին 62 մոջահեդները: Գուցե նրանք նույնպես համալրել են Ադրբեջանի ազգային բանակի դասալիքների շարքերը: Պարզվում է, որ մոջահեդները ասիրը բաց չեն թողնում դիմելու բժիշկներին: Արդյունքում նրանց մի զգալի մասը հայտնվում է Գյանջայի հոսպիտալում:

Նույն Լյաշիֆովի բարձրագույն հրամանատարությանն ուղղված զեկուցագրում տեղեկացվում է այն մասին, որ աֆղան մոջահեդների «Գերանում» գտնվելու շրջանում սանմաս կատարած այցելությունների հաճախականությունը կազմել է 1356 մարդ, հոսպիտալացվել են 41-ը: «Այն տպավորությունն է ստեղծվում, որ նրանք մեզ մոտ են եկել բուժվելու եւ ոչ թե կռվելու նպատակով», գրում է զինմասի հրամանատարը:

Մոջահեդների կամակորությունն ասիճանաբար լայն ծավալներ է ընդգրկում: Ավելին, նրանք էլ իրենց հերթին բողոքում են թիվ 200 զինմասի հրամանատարությանը եւ առաջ քաշում մի շարք պահանջներ: Նրանք դժգոհում են սպասարկման մակարդակից, պատկերացնո՞ւմ եք, զինվորական հրամանատարությունը նրանց մարդատար մեքենաներ չէր տրամադրում դեպի 9-անջա, Մինգեչաուր եւ այլ քաղաքներ զբոսանքի եւ շրջագայության մեկնելու համար: Հրաժարվում են ծխել առանց ֆիլտրի սիգարետներ, դժգոհում են փլավի, տրամադրվող թեյի որակից, որը զիշում է Ցեյլոնի թեյին, բժիշկների սպասարկման մակարդակից, հիշեցնելով, որ առանց բարձ ծվի անհնար է ապահովել մարտական կեցվածքը:

Մեզ արդեն ծանոթ Գյանջայի գեներալ-մայոր Սադրկովը թիվ 160 զինմասի հրամանատարությունից պահանջում է անհապաղ միջոցներ ծեռնարկել մոջահեդների պահանջները բավարարելու համար:

Իսկ քանի գնում, նոսրանում են նրանց շարքերը, հասնում մինչեւ 305-ի: Մեծանում է հոսպիտալում բուժվելու գայթակղությունը: Հավանաբար մոջահեդները, ծանոթանալով իրադրությանը, սկսում են հասկանալ, որ սա Աֆղանստանը չէ, իրենց



NORINVEST
Investment Financial Company
14 Abovian Str. Republic of Armenia

NORINVEST
Ինվեստիցիոն-ֆինանսային ընկերությունը
իր ավանդատուների ուշադրությանն է
ներկայացնում մի շարք նոր ինվեստիցիոն
նախագծեր
Ավանդների ընդունում 1-ից մինչեւ 6 ամսով.
հայկական դրամով
ամերիկյան դոլլարով
ռուսական ռուբլով
Ամենամսյա դիվիդենտներ.
հայկական դրամով մինչեւ 30,6 %
ամերիկյան դոլլարով մինչեւ 8,5 %
Միայն մեզ մոտ՝
Դիվիդենտների եւ ներդրված գումարի վճարումը, ավանդատուի ցանկությամբ, ինչպես հայկական դրամով, այնպես էլ՝ ամերիկյան դոլլարով
Միայն մեզ մոտ՝
Ներդրված գումարը եւ կուտակված հավելյալ տոկոսները ցանկացած օր հետ ստանալու հնարավորություն
Միայն մեզ մոտ՝
Հայկական դրամի եւ ռուսական ռուբլու փոխարկում ամերիկյան դոլլարի
եւ հակառակը:
Միայն մեզ մոտ՝
Հեռախոսազանգով պայմանագրերի կնքման հնարավորություն ավանդի գումարը մեկ շաբաթվա ընթացքում ներդնելու պայմանով
Միայն մեզ մոտ՝
Ամեն ամիս անց է կացվում վիճակախաղ, որին մասնակցում են տվյալ ամսվա ընթացքում պայմանագիր կնքած բոլոր ավանդատուները:
Իսկ հուլիսին կիսադարակի NORINVEST ընկերության
ՀԱՏՈՒԿ ՄՐՑԱՆԱԿԸ
այս կիսամյակի ընթացքում պայմանագիր կնքած բոլոր ավանդատուների համար
Մեր հասցեն՝ Երեւան, Աբովյան 14, «Երեւան» հյուրանոց, 2-րդ հարկ, 100 սենյակ
Հեռախոս՝ 501931

ՆՈՅ

«ՆՈՅ» ԲԱՆԿԸ
Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց համար բացում է եւ վարում ռուբլով եւ տարադրամով հաշիվներ:
Կատարում է դրամարկղային սպասարկում ռուբլով եւ տարադրամով:
Գնում եւ վաճառում է տարադրամ կանխիկ եւ անկանխիկ հաշվարկներով:
Կատարում է փոխանցումներ ՀՀ տարածքից դուրս:
Տրամադրում է կանխիկ վարկեր ռուբլով եւ տարադրամով:
Ընդունում է ավանդներ եւ դրանց դիմաց վճարում է՝ ՀՀ եւ ՌԴ ռուբլով՝ 3 ամիս 45%
6 ամիս 100%
ԱՄՆ-ի դոլլարներով՝ ամենամսյա վճարում 5%
3 ամիս 20 %
6 ամիս 45 %
500 եւ ավելի ամերիկյան դոլլարով ավանդի դեպքում՝ ամենամսյա վճարում 7 %
3 ամիս 25 %
6 ամիս 60 %
Դիմեք մեզ Երեւանի հետեւյալ հասցեներով
Պուշկինի 9 (մուտքը Աբովյան փողոցից), հեռ. 58-28-36
Հանրապետություն 67, հեռ. 56-51-07
Չեխով 23, հեռ. 46-25-27
Մարշալ Բաղրամյան 79, հեռ. 27-05-16
Կոմիտաս 52, հեռ. 23-12-55, 23-08-52
«Անի» հյուրանոց 507, 514 սենյակներ հեռ. 59-45-14, 56-49-30
«ՆՈՅ» բանկը հայտնում է իր ավանդատուներին, որ 500 եւ ավելի ամերիկյան դոլլարով ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքները հունվարի 15-ից բարձրացվում են՝ ամենամսյա վճարում 7%
3 ամիս 25%
6 ամիս 60%

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Վերջերս Թուրքիայում գտնվելով, վաստակաշատ լրագրող Դավիթ Զենյանը հնարավորություն է ունեցել հանդիպելու տեղի հայ համայնքի քաղաքական, կրոնական ու տնտեսական բնագավառի գործիչների հետ եւ խիստ ուշագրավ հոդված գրելու AGBU News ամսագրի նոյեմբերյան համարում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Թուրքիայի հայկական համայնքը

«Մեր հասցեն փոխելու մտադրություն չունենք»

Որն է հայկական համայնքի կենսունակության գաղտնիքը. ահա այդ խնդրին է հիմնականում անդրադառնում հոդվածագիրը: Նա նշում է, որ փոխանակ իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները դասավորեն ընդունելու որոշես վերջնական ու անփոփոխ «փաստեր», համայնքը փորձում է ամեն մի կոնկրետ դեպքում «ելք որոնել» եւ առաջ շարժվել կամավոր կերպով նվիրաբերելով ամեն ինչ հանուն հայ հասարակության ընդհանուր բարոյականության եւ կենսունակության:

Դրանով է բացատրվում այն, որ հակառակ «հին վերքերի», այժմ էլ երկրում մեծ հաջողությամբ գործում են 33 հայկական եկեղեցիներ, 20 դպրոցներ, 600 տեղանոց մի հիվանդանոց եւ տասնյակ կազմակերպություններ:

Սակայն Թուրքիայի հայկական համայնքի համար ամեն ինչ չէ, որ «վարդագույն» է: Չնայած անհաս հայերի նկատմամբ նկատելի խստականություն չկա տուկայական հարաբերություններում, եկեղեցին հաճախ թիրախ է դառնում ազգայնականների եւ կրոնամոլների կողմից: Ստամբուլի նահանգապետ Հայիրի Քոզաքօղլուին ուղղված 1993 թ. հուլիսի 26-ի իր նամակում Հայոց պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանն «առնվազն 10 բռնության դեպքեր» է նշել, որոնք [illegible] Ստամբուլի տրգանի հայկական հասարակությունների վրա: Այդ հուլիս ընկած ժամանակահատվածում կատարված այդ տասը դեպքերից են եղել հայկական գերեզմանատների խաչքարերի ջարդելը, եկեղեցում պատարագի ընթացքում քարեր շպրտելը, կնոջի ժամանակ ոմբակոծումը եւ գողությունը: Հատկանշական է, որ դեպքերը զուգադիպել են Լեռնային Ղարաբաղում հայկական կողմի հաղթանակներին եւ թուրքական մամուլում դրանց վերաբերյալ անբարյացակամ մեկնաբանություններին: Այնուամենայնիվ, այդ դեպքերը չեն կասեցրել հայկական համայնքի կյանքն այնտեղ: «Կարծես ինչքան վտանգը մեծանում է, այնքան ուժեղանում է համայնքը», ասում է բանաստեղծ Արքին Ջումբուշյանը:

«Մեր կենսունակության բանալիներից մեկն այն է, որ մենք մեզ օտար չենք համարում, ինչպես, ասենք, մյուս հայերը՝ Բեյրութից մինչեւ Լոս Անջելես: Մենք Ստամբուլի եւ առհասարակ ամբողջ Թուրքիայի հայերս, մի համայնք ենք, որ սիրում է այստեղ է եղել եւ այստեղ էլ մնալու է: Մենք մեր հասցեն փոխելու մտադրություն չունենք», ավելացնում է Ստամբուլի տուկայի հայտնի ոդնձագործներից Մուրատ Բիլիդը եւ շարունակում. «Որպես համայնք մենք սնվում ենք, ուժ ստանում այս հողի վրա մեր անցած երկար պատմությունից եւ ունեցած ժառանգությունից: Ի հակադրություն մյուս երկրների, մեր արմատներն այստեղ շատ խորն են: Եկեղեցիներից մի քանիսն այստեղ կառուցվել են դեռեւս 1150, 1360, 1461 եւ 1590 թվերին»:

Ստամբուլի 13 Սանուց միությունների ամենահեղինակավորի՝ 107-ամյա Կեդրոնական վարչության նախագահ տիկին Գայծոյանի տվյալներով, Ստամբուլի 3000 միջնակարգ դպրոցների մեջ Կեդրոնականը գրավում է 125-րդ տեղը եւ չափազանց դժվար է պատկերանել ուսման բարձր մակարդակն այնտեղ: «Մենք ուսուցիչների մեծ կարիք ունենք, իսկ նրանցից ավելի՝ վերապատրաստման ինստիտուտի կարիքը: Հատկապես հայոց լեզվի ուսուցիչների համար հարցն այժմեական է, քանի որ նրանք ունեն ընդամենը հայկական միջնակարգ կրթություն եւ վերապատրաստվել են թուրքական համապատասխան ինստիտուտներում», իր մտահոգությունն արտահայտեց նա հարցազրույցի ժամանակ:

Վերջին տվյալների համաձայն, համայնքն ունի նաեւ երկու մարզական միություններ եւ 19 երգչախմբեր: 12 միլիոնանոց քաղաքում 60 հազարի հասնող համայնքի կենսունակության պահպանումը, իհարկե, հեշտ գործ չէ եւ եթե նոր ուսուցիչներ հավաքագրելը դժվարին խնդիր է, առավել բարդ է 33 գործող եկեղեցիների համար որակյալ քահանաներ պատրաստելը:

«Մենք հոգեւոր ճեմարան չունենք, ոչ էլ այլ հոգեւոր կենտրոնների հետ հոգեւորականների փոխանակման հնարավորություն: Թուրքիայի հայերը կենսունակ են շնորհիվ եկեղեցում եւ դպրոցին իրենց նվիրվածությանը», ասում է արքեպիսկոպոս Մնացական Մութաֆյանը: «Մենք հնացել ենք բանակցություններ վարելու մեջ», ավելացնում է հայաստանցի «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռոբերտ Հասսեճյանը:

«Դպրոցներ, եկեղեցիներ, հիվանդանոց, թատրոն եւ երգչախմբեր պահելը հեշտ գործ չէ: Դրանք միլիոնավոր դոլլարների կարիք ունեն, եւ այդ գումարն այստեղ պետք է գոյանա, մեր համայնքի ներսում, նրա ուժերով, ասում է Ստամբուլի Սուրբ Գրիգոր հիվանդանոցի գլխավոր բժիշկ Մարտիրոս Յենիյորգանը: Այստեղ մենք ունենք դժվարություններ եւ սահմանափակումներ»: Այդ օրենքներից մեկը 1945-ին հրապարակված հարուստների սեփականության վրա դրված Վաղքֆ Վերգիսի կոչվող այն որոշումն էր, որը ֆինանսական մեծ վնաս հասցրեց ինչպես հայերին, այնպես էլ հույներին եւ մյուս փոքրամասնություններին՝ զրկելով նրանց իրենց հասանելիք շահաբաժնից: 600 տեղանոց հիվանդանոցը կառուցված է 1832 թվին: Այնտեղ աշխատում են ավելի քան 35 բժիշկներ (որոնցից միայն 4-ն են թուրք) տարբեր մասնագիտությունների գծով: Հիվանդանոցը բաղկացած է 6 մասնաշենքերից, ընդարձակ պարտեզից, ծերանոցից եւ հոգեբուժարանից:

Սահմանափակումներ առաջադրող միջոցառումներից մի քանիսը բխում են 1936 թվին ընդունված այն օրենքից, համաձայն որի անօրինական է համարվում ոչ միայն անձնական սեփականության կտակումը համայնքի այս կամ այն հասարակություններին, այլեւ համայնքային սեփականության վերանորոգումը, վաճառքը կամ լուծարքի ենթարկելը:

Ուրիշ հասարակությունների խորհուրդների անդամների նման հիվանդանոցի տնօրենների խորհրդի նախագահ Փիլո Աթանը ավելի շատ ժամանակ է անցկացնում հիվանդանոցում, քան իր սեփական աշխատատեղում: Բայց համայնքին օգտակար լինելու կամավորության սկզբունքը չափազանց տարածված է Ստամբուլի հայերի շրջանում: «Ցիշտ է, համայնքը հարուստ է, բայց ուրիշ վայրերում էլ նման գանձեր կան: Կարեւորը տալն է, առատորեն նվիրաբերելը, սիրով, կամավոր կերպով ժամանակ եւ փող հատկացնելը: Դա է, որ Ստամբուլի հայերին առանձնահատուկ է դարձնում», ասում է լրագրող եւ գրող Ռոբերտ Հասսեճյանը եւ ավելացնում. «Հայ միլիոնատերերից շատերը իրենք իրենց ջանքերով են հասել այդ դիրքին եւ հենց իրենք էլ պահում են համայնքը: Մի որեւէ հայկական հասարակության բյուջեի բացը փակելու նպատակով կազմակերպված ճաշկերույթի ընթացքում 100 հազար դոլլարի նվիրատվություն հավաքելը սովորական երեւույթ է»:

Բայց միայն հաջողություններով չէ, որ ամեն ինչ ոչնչանավորված է Թուրքիայի հայկական համայնքում: «Շատ ցավալի է տեսնել երիտասարդներ, որոնք ոչ բան գիտեն հայոց պատմության հատկապես վերջին հարյուրամյա շրջանի իրադարձությունների մասին: Ապրիլի 24-ը հաճախ անցնում է աննկատ: Մենք չենք կարողանում ապահովել մեր շրջանավարտների եւ հոգեւորականների հետագա ուսուցումը», ասում է համայնքի ակտիվ անդամներից մեկը, որը հրաժարվեց իր անունը տալ: «Շատ ամուր համայնք է, բայց կարող է թուլանալ մեկ կամ երկու սերունդ հետո: Մեր միակ հույսը Թուրքիայի եւ նորանկախ Հայաստանի Հանրապետության միջեւ հարաբերությունների նորակաղ բարելավման մեջ է, որի որպես անմիջական արդյունք հաջողելու է հոգեկան, մշակութային եւ կրոնական «սնունդ»: Մինչ այդ դպրոցը շարունակվում է, ինչպես աշխարհի շատ ուրիշ հայկական գաղութներում»:

ՀԱՄԱՌՈՏ

ՏԱՋԻԿՍՏԱՆ

Սպանվել է 10 սահմանապահ

ԴՈՒՇԱՆԲԵ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիրակի օրը տաջիկ-աֆղանական սահմանում սպանվել է առնվազն 10 զինված սահմանապահ: Ավելի քան 20 մարդուց բաղկացած հակակառավարական զինված մի խմբավորում կեսօրին Փյանջի սահմանադահ ջոկատի տեղամասերից մեկում փորձել է անցեգալ կերպով վերադառնալ Աֆղանստանից: Տեղի է ունեցել սահմանապահների բախում ռուս սահմանադահների հետ: Հակառակորդի ոչնչացման գործում սահմանադահներին օգնել է ոտեական սահմանները պաշտպանող կոլեկտիվ խաղաղարար ուժերի ուզբեկական գումարակը: Սահմեդական գրոհայիններից մի մասին հաջողվել է վերադառնալ Աֆղանստան: Զինծառայողների մեջ տուժածներ չկան:

ՊԱԿԻՍՏԱՆ

Նոր նախաձեռնություն

ԻՍԼԱՄԱԲԱԴ, 16 ՀՈՒՆՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պակիստանը հանդես է եկել աֆղանական ճգնաժամի կարգավորմանը նվիրված շրջանային հաշտության խորհրդաժողով անցկացնելու նախաձեռնությամբ: Այդ մասին հայտնեց Պակիստանի արտգործնախարարը Իսլամաբադում գտնվող Աֆղանստանի նախագահի հատուկ ներկայացուցչի հետ հանդիպումից հետո: Ենթադրվում է, որ աֆղանական հակամարտ խմբավորումներից եւ Պակիստանից բացի, խորհրդաժողովին կմասնակցեն Իրանը, Սաուդյան Արաբիան, ինչպես նաեւ Տաջիկստանը, Թուրքմենստանը եւ Ուզբեկստանը:

Իսլամաբադում մամուլի ասուլիսում ելույթ ունենալով, արտգործնախարարը նշեց, որ Պակիստանի կառավարությունը կարող է պահպանում Աֆղանստանի հակամարտության մասնակից բոլոր կողմերի հետ:

ՀԱՐԱՎԱՍԼԱՎԻԱ

Դինարը գնահատում են լոկ դրամագետները

Այս օրերին հավասլավական դինարի փոխարժեքի անսպասելի աճ է նկատվում... արեւմտաեվրոպական երկրների հավաքորդների բորսաներում: Դեռեւս շրջանառության մեջ մնացող, բայց գինը կորցրած 500 միլիարդ դինարի բանկատոմսը դրամագետների շրջանում ներկայումս արժե 20 գերմանական մարկ:

Նոր տարուց առաջ շրջանառության մեջ դրված 11 զրոներով բանկատոմսի արժեքը բառացիորեն մեկ շաբաթվա ընթացքում 10 մարկից իջավ 10 պֆենիգի: Երկրում դրանից հետո անցկացվեց բանկատոմսերի հերթական անվանափոխություն, որի ընթացքում մեկ «հին» միլիարդը հավասարեցվեց մեկ նոր դինարի: Ի դեմ, նոր դրամի թողարկմանը հաջորդած 2 շաբաթվա ընթացքում հարկ եղավ շտապ կարգով թողարկել 50 եւ 100 հազարանոց թղթադրամներ:

Անցյալ տարի Հարավսլավիայում անվանափոխությունների ընթացքում ընդամենը թողարկվել է ավելի քան 40 տեսակ թղթադրամ ու մետաղադրամ: Ներկի եւ բանկատոմսի թղթի ակնհայտ պակասի պատճառով բազմաթիվ «հին», «միջակա» եւ նոր թղթադրամներ ջրի երկու կաթիլի պես նման են իրար: Դրանից մշտապես օգտվում են մանր խարդախները, անուշադիր վաճառողներին, անտեղյակ առեւտրականներին կամ օտարերկրացիներին հրամցնելով շրջանառությունից դուրս եկած փողեր:

ԳԵՐՄԱՆԻԱ

Ծխախոտի տուկայի խնդիրները

Ծանր ժամանակներ են սկսվել Գերմանիայի ծխախոտի արդյունաբերության մեջ: Գլանակներ եւ նիկոտինային այլ արտադրանք թողարկող կոնցեռները այժմ ստիպված են համատեղ պատշտպանություն կազմել ծխելու հակառակորդների խորհրդարանային հզոր լոբբիի եւ ոտեական հարկային ծառայությունների դեմ: Առաջինները, ծխախոտը համարելով մարդկանց առողջությանն սպառնացող լուրջ վտանգի, տարեսկզբին հայտարարեցին, թե մտադիր են Գերմանիայի Բունդեսթագի ֆինությանը ներկայացնել աշխատատեղում եւ հասարակական վայրերում ծխելն արգելող օրինագիծ: Երկրորդները ծխախոտը համարում են ոչ թե բոլոր մեղքերի համար խավության նոխազ, այլ ավելի շուտ կբու կով, պահանջելով դրա վաճառքի հարկի հերթական բարձրացում: Իսկ ոտեությունը, որը ձգտում է մեկ անգամ եւս տրորել գլանակ արտադրող կոնցեռների ցավոտ տեղը, բնավ էլ անշահադեպ չէ: Արդեն այժմ յուրաքանչյուր գլանակի վաճառքից ստացվող շահույթի 72 տոկոսը մուտք է գործում ոտեական գանձարան: Միայն անցյալ տարի, ԳԴՀ ֆինանսների նախարարության կանխատեսումների համաձայն, ծխախոտի հարկերի ընդհանուր գումարը կկազմի 19 միլիարդ մարկ: Որքան էլ հսկայական թվա, թուլական ծխողները նկատելի ավանդ են ներդնում Գերմանիայի բյուջեի գոյացման մեջ: Դաշնության բյուջեի բոլոր մուտքերի մոտ 5 տոկոսը գոյանում է այսպես կոչված հողարկված այն հարկերից, որոնք նրանք մուծում են գլանակների հերթական տուփը գնելիս:

ԱՐ-40

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

փոխանցման կարգով, շուկայականից 20–30 % էժան գներով վաճառում է

1. Կարտոֆիլ՝ Երեւանում եւ Ստեփանավանում
2. Կոնյակ «Ընտիր», Երեւանի կոնյակի գործարանի արտադրության
3. Կոնյակ՝ 5 աստղանի, Երեւանի կոնյակի գործարանի արտադրության
4. Գինի պորտվեյն՝ տեղական արտադրության
5. Գարեջուր՝ բելգիական
6. Ոչխարի հոտ՝ 430 գլուխ
7. Խոշոր եղջերավոր անասուններ
8. Ավտոմեքենա ԵՐԱԶ՝ 2 հատ
9. Կումինեսցենտային լամպեր՝ ԼԲ-40, ԼԲ-20

Երեւանում կարելի է գնել նաեւ կահույքի արտադրության մոսկովյան, Նիժնի Նովգորոդի, Ռոստովի մասնաճյուղերի պահեստներում ցուցադրված ապրանքներ, որոնց մասին տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել՝ Երեւան, Կոմիտասի 49, «Ար-40» ԲԸ, հեռ. 235301, 236897, 230800

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՏԱՐԵԼ ԿԱՆԽԻԿ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՈՎ:

digitised by A.R.A.R.@

ԱՇԽ

Մշակույթ

35-ամյա Մայքլ Ջեկսոնը համարվում է մեր ժամանակների ամենամեծ երգիչներից մեկը: Նրա «Thriller» ձայնադիսկների ալբոմից վաճառվել է 40 միլիոն օրինակ, իսկ «Bad» եւ «Dangerous» ալբոմներից՝ ընդամենը 20 միլիոն: Սա իրոք մրցանիշ է: Բացի դրանից, նրան համարում են դարիս մեծագույն դարողներից մեկը Ֆրեդ Աստերի հետ միասին: Բայց անցյալ տարվա օգոստոսին իր նկատմամբ սեռական բռնաբարության գործադրման վերաբերյալ կալիֆորնիացի մի 13-ամյա տղայի հայցադիմումից հետո, Մայքլ Ջեկսոնի կյանքում մեծ փոփոխություններ սկսվեցին: Այս տարվա մարտի 21-ին նախատեսված է Ջեկսոնի դատավարությունը, իսկ մինչ այդ, այսօր հունվարի 18-ին նա դեմք է դատարան ներկայանա քննիչի դահանջով:

Մայքլ Ջեկսոնի դատավարությունը

Անցյալ տարվա օգոստոսից ԱՄՆ եւ այլ երկրների զանգվածային լրատվության միջոցները դարբերաբար անդրադառնում են Մայքլ Ջեկսոնի հետ կապված միջադեպին: Սկսել են նրա մասին գրել եւ ասել փաստորեն ամեն ինչ, իսկ Ջեկսոնի փաստաբանները լրագրերին բնավ չեն դատապարտել վարկաբեկման համար: Դա բացատրվում է մասամբ նրանով, որ արդեն շուրջ 10 տարի է, ինչ զանգվածային լրատվության միջոցները գրեթե ամեն օր որեւէ բան են հաղորդում ռոք-աստղի մասին, տեղեկություններն ստանալով բացառապես նրա օգնականներից, մինչդեռ Ջեկսոնը երբեք հարցազրույց չի տալիս: 1993 թ. օգոստոսի 17-ին Կալիֆորնիայում երգչին դատարանում արգելվեց որեւէ կապ ունենալ 13-ամյա այն դեռահասի հետ, որը բողոքել էր նրա դեմ: Նույն ամսվա 20-ին Ջեկսոնը մեկնեց ասիական շրջագայության, այնտեղ իմացավ Լոս Անջելեսի իր բնակարանում կատարված խուզարկության մասին, չեղյալ հայտարարեց Բանգկոկում նախատեսված իր երկու համերգները, դատաճառաբանելով առողջական վիճակը: Սինգապուրում նրան այցելեց իր բարեկամուհի Էլիզաբեթ Թեյլորը Ջեկսոնի ծնողների հետ: Վերջիններիս Մայքլը հրավիրեց ընդունել: Միաժամանակ Մայքլի քույրը՝ Լաթոյան, «Թուդեյ շոուին» դատմեց, թե իրենց համատեղ կյանքի ընթացքում հաճախ դեռահասներ էին գալիս գիշերն անցկացնելու Մայքլի մոտ եւ խոստացավ ավելին ասել մի կլորիկ գումարի դիմաց: Այնուհետեւ Ջեկսոնը հեռացավ հայտարարեց Չիլիում եւ Մեքսիկայում նախատեսված բազմաթիվ համերգներ, եւ նոյեմբերի 12-ին վերջնականապես դադարեցրեց համերգային շրջագայությունը: Նոյեմբերի 14-ին Pepsi-Cola-ն դադարեցրեց գործակցությունը երգչի հետ: Դեկտեմբերի 28-ին Ջեկսոնին մեղադրող կազմակերպությունները դատական գործ սկսեցին, նրանից դահանջելով 20 միլիոն դոլար: Մեղադրանքը բաղված է մշուշի մեջ: Որոշ տեղեկություններ համաձայն, երգչին տեսել է Էլիզաբեթ Թեյլորի ամենայարազատ ընկերակցությունում, ապա Լոնդոնի այն հյուրանոցում, որտեղ աշխատում է Ջոնի բժիշկը: Հավատի է լինում, որ դեկտեմբերի 12-ին Ջեկսոնը ուսանավոր հիվանդանոցում վիրահատվել է ԱՄՆ-ում: Ենթադրվում է, որ մեղադրանքներ չեն այն դեպքում, ինչպես ինձ մեղադրում են, հայ արտաքին նա CNN հեռուստակայանին: Միակ մեղքս այն է, որ ոչ ոքի ունեցվածքս տալիս եմ աշխարհի մանուկներին, սիրում եմ ամեն տարիքի ու ցեղի երեխաներին, ուրախանում նրանց անմեղ եւ ժպտացող դեմքերին նայելով: Նրանց միջոցով աղոթում եմ իմ չունեցած մանկությունը»: Իրոք, Մայքլը մանկություն չի ունեցել: Նրանց ընտանիքում 9 երեխա կար: Հայրը՝ জոզեֆ Ջեկսոնը միջակ կիթառահար էր եւ չկարողացավ լավ երաժիշտ դառնալ: Նա փորձեց փոխհատուցում ստանալ իր զավակներին անգթորեն աշխատեցնելով՝ երգ ու դար դասավանդելով: Մայքլն այդ ժամանակ 5 տարեկան էր: Երբ জոզեֆը դժգոհ էր մնում իր զավակների աշխատանքի որեւէ տարից, ծեծում էր նրանց: Ընտանեկան երաժշտախմբի անդամներից մեկը վերհիշում է, որ միայն Մայքլն էր համարձակվում երբեմն ընդդիմանալ հորը: Երբ Մայքլն իր դարը գերազանց էր համարում, ոչ մի ծեծ մոր՝ Քաթրինի վկայությունը, որը չէր երաշխավորվել:

Իսկ վերջերս երեք կոմդոզիտորներ հանկարծ «դարգեցին», որ Մայքլ Ջեկսոնն իր որոշ հանրահայտ երգերում «օգտագործել է» իրենց հորինած երաժշտության տարրեր: Նրանք նույնդես բողոք ներկայացրին:

Այս գործի առիթով փաստաբանների իսկական ճակատամարտ է սկսվել, դեկտեմբերի 28-ին գրեց «Ուոլ սթրիթ ջորնալը»: Գործին միջամտել են փաստաբան Բերտրամ Ֆիլդսը, մասնավոր խուզարկու Էնթրնի Պելիկանոն եւ ուրիշներ, անշուշտ, հրադարվելով հսկայական հոնորարներով (տարեկան հավանաբար 3 միլիոն դոլար) եւ դատավարության շրջանակում բեմի վրա եզակի երեւույթ է, իսկ կյանքում ճգնակյաց, որը սիրում է կենդանիներին եւ երեխաներին: Ջեկսոնն ասում է, որ միայն երեխաներն են իրեն հասկանում, վաս բան չեն ցանկանում եւ իրենից ոչինչ չեն ակնկալում: Նա երեխաներին շոայլորեն նվերներ է բաշխում: Իր փոքրիկ բարեկամների հետ զբոսնելու դեպքում գիշերվա համար վարձում է Դիսնեյլենդը: 1988 թ. նա Կալիֆորնիայի իր տան շուրջը կառուցել տվեց զվարճանքի զբոսայգի եւ կենդանաբանական այգի:

Երեխաները կիսում են նրա կյանքը, ժամանցը, բայց, ավաղ, նաեւ մահճակալը:

Մայքլը սիրում է ինքն նրանց հետ, դա գուցե ինքնության անմեղ դրսեւորում է, սակայն ասեկոսեների, չարախոսությունների եւ մեղադրանքների տեղիք է տալիս: Հատկանշական է, որ Ջեկսոնին մեղադրող 13-ամյա դեռահասի հայրը դահանջում է ոչ թե բանտարկություն, այլ դարզապես դրամ: Շատ դրամ: Սակայն եթե մեղքն ապացուցվի, երգիչը կարող է բանտարկվել: Արդեն մի քանի շաբաթ է, ինչ Ջեկսոնի նախկին ծառայողները (վարորդ, բիլիարդահեր, ադախին) սկսել են վկայություններ տալ իրենց երբեմնի տիրոջ դեմ: Բայց կասկած է հարուցում այն փաստը, որ նրանց մեղադրական ցուցմունքները հրադարակվում են սկանդալային լրագրերում եւ հեռուստատեսային կասկածելի հաղորդումներում, որոնք շոայլորեն վարձատրում են նման նյութերը: 100000 դոլարը եւ մի քանի ռոքեանոց հոլակը կարող են գործադրիչին կեղծ վկա դարձնել:

Հետաքրքիր է, որ անգամ Մայքլի հայրը՝ জոզեֆ Ջեկսոնը «Հարդ ֆոքսի» հեռուստաձրագրին առաջարկել էր 150 հազար դոլարի դիմաց վկայություններ տալ իր որդու «հեղինակների» վերաբերյալ: Թեեւ գինն ինչպես վել էր 50 հազարի, բայց գործարքը չէր կայացել, քանի որ հեռուստաձրագիրը դրսեւանցել էր նաեւ Մայքլի շնորհիվ ակնկալվող հոչակով: Միաժամանակ հաղորդվում է, որ ձայնագրման հանրահայտ EMI եւ Ջեկսոնի ATV ֆիրմաները նոր դայմանագիր են կնքել, որի շնորհիվ երգիչը կարող է ստանալ 100 միլիոն դոլար:

Մի խոսքով, հունվարի 18-ին Մայքլ Ջեկսոնին դատարան կանչած քննիչի աշխատանքը բավական բարդ է լինելու, քանզի այս գործում բախվում են բազմաթիվ անձանց շահեր եւ առկա են միլիոնավոր դոլարների ակնկալիքներ: Անկախ դատավարության ավարտից, արդեն իսկ դարզ է, որ Մայքլ Ջեկսոնի անձը մեկընդմիշտ վարկաբեկված է եւ դժվար թե նա վերադառնի իր առաջվա տեղը:

Ըստ Ֆրանսիական մամուլի,
դատարարեց ՊԵՏՐՈՍ ՔԵՇԵՇՅԱՆԸ

ԱՅԴԱԳԻՐ

Սդայի տուն

Երեւանի Սդայի տունը դարձել է ինքնաշխատ մշակութային օջախ, որտեղ մեր կյանքի համար անսովոր դարձած աշխույժ մթնոլորտում գործում են բատերական, էստրադային, ազգագրական եւ գեղարվեստական խմբերը: Վերջերս ստեղծագործական օդակը համալրվեց եւս մեկ՝ «Հարազաս» կրկեսային խմբով, որն իր առաջին ելույթով հանդես կգա փետրվարի կեսերին:

Մալյանի թատրոն

Հենրիկ Մալյանի անվան թատրոնը դատրաստվում է մեկնել հյուսիսադերի Թեհրան, Բեյրութ եւ Եգիդտոս՝ փետրվար-մարտ-ադրիլ ամիսների ընթացքում, «Հեքիաթներ», «Ընկեր Փանջունի», «Դեկամերոն» եւ «Աստվածային կատակերգություն» խաղացանկով: Ներկայումս թատրոնը չի գործում: Դատճառներից մեկը (թերեւս գլխավորը) նոր մասնաշենքի շինարարության ավարտման եւ շահագործման հետ կապված հարցն է: Հուսանք, որ նախատեսված ժամկետին՝ մարտ ամսին, նոր թատրաշենքը կհյուրընկալի իր հանդիսատեսին:

ՄՈՍԿՎԱ

«Հյուսիսափայլի» երկրորդ ծնունդը

ՅԻՎԱՆ ԲԱԼԱԳՅՈՉՅԱՆ

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 130-ամյա ընդմիջումից հետո Ռուսաստանում վերսկսվեց հանրահայտ «Հյուսիսափայլ» հանդեսի հրատարակումը: Առաջին համարը Մոսկվայում լույս տեսավ նոր տարվա շեմին: Մեսրոպ Նազարյանի հիմնադրած հանդեսը արտոնվել էր 1857 թվականի մարտի 17-ին նորին կայսերական մեծություն Ալեքսանդր Երկրորդի ստորագրությամբ:

«Հավատարիմ մնալով ժողովրդավարական ավանդույթներին, վերածնված հրատարակությունը եռանդորեն կաջակցի Ռուսաստանի Հանրապետության մեջ տեղի ունեցող բարեփոխումներին, կհամագործակցի նրա առաջավոր խավերի, մասնավորապես», Արմենդրեսի թղթակցին ասաց հանդեսի գլխավոր խմբագիր Դավիթ Բալոյանը: Մենք մեր ընթերցողներին Ռուսաստանի լիիրավ քաղաքացիներին, կոչ կանենք բոլոր ջանքերը, ինչպես նախկինում, նոդատակավորել մեր ժողովրդի հիմնական հոգեւոր արժեքի եւ ազգային մշակույթի հիմքի հայոց լեզվի տարածման ու զարգացմանը:

Հանդեսի առաջնորդող հոդվածում ասվում է. «Վերջին 70 տարում շատ էր գովերգվում ժողովուրդների բարեկամությունը, սակայն գրեթե ոչինչ չէր արվում, որ այն լինի իրական եւ ոչ թե դատրաստված: Իսկ երբ միությունը փլուզվեց, այդ բարեկամությունից հետ անգամ չմնաց: Ներկայումս քաղաքական գործիչների համար ոչ թե բարեկամությունը, այլ տնտեսական, սոցիալական եւ այլ խնդիրներն եւ առաջնահերթ, եւ ոչ ոք չի մտածում մշակույթի, ժողովուրդների փոխհարատացման, դարավոր բարեկամական ավանդույթների մասին»: Հանդեսը հիշեցնում է, որ մշակույթը միշտ էլ եղել է այն խաչը, որն իր ուսերին կրել է առաջադեմ մտավորականությունը, որը բոլոր ժամանակներում էլ նյութապես տառապել, բայց հոգեւոր արժեքներ է ստեղծել իր ժողովրդին:

ՄՇԱԿՈՒՅԹԱՅՈՒՆ

Գրողների միության ամենամյա մրցանակներ

Ամփոփվեցին Հայաստանի գրողների միության՝ տարվա լավագույն գրքի ամենամյա մրցանակաշահության արդյունքները:

Չափածո հրատարակման Ավ. Իսահակյանի անվան մրցանակը շնորհվեց Արտաշես Ղազարյանին «Սգասյուն տաճար» եւ Խաչիկ Մանուկյանին «Վիրավոր խաչ» ժողովածուների համար:

Բանաստեղծական լավագույն առաջին գրքի մրցանակին արժանացավ Լիլիթ Աղագուլյանի «Սիրո մանանա» ժողովածուն:

Արձակի Դ. Դեմիրճյանի անվան մրցանակը ստացան Ռուբեն Ֆիլյանը (հետմահու) «Քո երկրի դեսդանը» վեպի եւ սփյուռքահայ ճանաչված արձակագիր Պողոս Գուրելյանը՝ վերջին տարիներին հայրենիքում ու արտերկրում հրատարակած ստեղծագործությունների համար:

Հրատարակախոսության Մ. Նալբանդյանի անվան մրցանակը շնորհվեց Սուրեն Դանիելյանի «Սփյուռքահայ վեպը», Լեւոն Ակրչյանի «Ժամանակից դուրս մարդը տխուր է», «Աննա Ախմատովա» եւ Կիմ Աղաբեկյանի «Արդի հայ արձակի միտումները» ուսումնասիրությունների:

Լավագույն մանկական ստեղծագործության՝ Հովհ. Թումանյանի անվան մրցանակը ստացավ Սուրեն Մուրադյանի «Ինչո՞ւ երկու, ինչո՞ւ մեկ» ժողովածուն:

Լավագույն թարգմանության Ե. Չարենցի անվան մրցանակին արժանացավ Գրիգոր Զանիկյանը՝ հայազգի մամլոգ Ռուսաստի «Իմ կյանքը Նադդոլեոնի կողքին» եւ Արման Մալումյանի «ԳՈՒԼԱԳ-ի որդիները» գրքերի՝ ֆրանսերենից կատարած թարգմանության համար:

Ժողովուրդների բարեկամության Հովհ. Թումանյանի անվան մրցանակը շնորհվեց Կոնստանտին Վոնվոդսկուն եւ Իգոր Բաբաեւին Ղարաբաղի ազատագրական դայքարին նվիրված հրատարակությունների համար:

Մրցանակաբաշխության հանձնաժողով

ՄՈՍԿՎԱ

«Շամպայն». արբեցուցիչ օծանելիք

Փարիզյան նորաձեւության եւ օծանելիքի օրենսդիրներից մեկը՝ հանրաճանաչ Իվ Սեն Լորանը դատի էին տվել այդ առնչությամբ: Փոքրինչ տարօրինակ էր այն, որ Անվանումների ազգային հաստատությունը եւ գինեգործների միջմասնագիտական կոմիտեն դատի չէին տվել «Շամդայն» անունով արդեն իսկ գոյություն ունեցող հարյուրավոր ադրանքներ (ներքնազգեստ, խուզ, թխվածքաբլիթ, դաղդաղակ, հանդեսներ եւ այլն) արտադրողներին: Ոմանք կասկածում են, որ հավանաբար այս գործին մասնակից են ֆրանսիական օծանելիքի ուրիշ հանրահայտ մրցակից ֆիրմաներ եւ մանավանդ «Քրիստիան Դիորը» եւ «Ժիվանշին»: Օրերս դատավարությունն ավարտվեց դատը շահողների ու տանուլ տվողների համար բավական անսդասելի արդյունքներով: Բանն այն է, որ անցած երեք ամիսներին դատավարության հետ կարգադրությունը Իվ Սեն Լորանին դատի էին տվել այդ առնչությամբ: Փոքրինչ տարօրինակ էր այն, որ Անվանումների ազգային հաստատությունը եւ գինեգործների միջմասնագիտական կոմիտեն դատի չէին տվել «Շամդայն» անունով արդեն իսկ գոյություն ունեցող հարյուրավոր ադրանքներ (ներքնազգեստ, խուզ, թխվածքաբլիթ, դաղդաղակ, հանդեսներ եւ այլն) արտադրողներին: Ոմանք կասկածում են, որ հավանաբար այս գործին մասնակից են ֆրանսիական օծանելիքի ուրիշ հանրահայտ մրցակից ֆիրմաներ եւ մանավանդ «Քրիստիան Դիորը» եւ «Ժիվանշին»: Օրերս դատավարությունն ավարտվեց դատը շահողների ու տանուլ տվողների համար բավական անսդասելի արդյունքներով: Բանն այն է, որ անցած երեք ամիսներին դատավարության հետ կարգադրված բանավեճերը յուրօրինակ գովազդ դարձան միեւնույն գինուն կրող թե խմիչքի եւ թե օծանելիքի վաճառքը խթանելու համար: Վաճառքին նդաստեցին նաեւ մոտալուտ ծննդյան եւ տարեմուտի տոները: Եթե դեկտեմբերին շամդայնի վաճառքի աճը կարելի է բնական համարել, ապա նույնանուն օծանելիքի վաճառքի ծավալի կտրուկ ընդլայնումը պետք է բացատրել դատավարության արդյունքով. ըստ դատավճռի «Շամդայնի» վաճառքը դեկտեմբերի 30-ից արգելվում է: Պատահական չէ, որ ֆրանսուհիները ձգտում էին հնարավորին չափ շուտ ձեռք բերել արդեն իսկ հազվագյուտ դարձած այդ օծանելիքը: Le Point հանդեսի տվյալներին համաձայն, Ֆրանսիայում «Շամդայնի» վաճառքի համար վատդրքի նախատեսված բնագիծը գերազանցվել է 40 տոկոսով: Վաճառվել է ավելի քան մեկ միլիոն սրվակ օծանելիք, հասույթը կազմել է 220 միլիոն ֆրանկ: Արտահանման համար նախատեսված ծավալը գերազանցվել է 25 տոկոսով: Դեկտեմբերի 3-ից սասնօրյակում օծանելիքի բազմաթիվ խանութներում «Շամդայնի» դատարարներն սդառվել էին: Դեկտեմբերի 9-ին եւ 10-ին սոցիոլոգիական հետազոտությունների «Սոֆրես» կազմակերդության անց կացրած 1000 ֆրանսուհիների հեռախոսային հարցումը ցույց տվեց, որ վաճառահանման երկուսուկես ամիսներից հետո կանանց կեսին ծանոթ է այդ օծանելիքը: Ու թեեւ տրանից հետո այն դատավճռի համաձայն այլեւս չի կրի «Շամդայն» անունը եւ կանվանվի դարզապես «Իվ Սեն Լորան», բայց դրանից սրվակի դարունակությունն ու որակը չեն փոխվի: Այնդես որ, հաջողությունն ապահովված է:

Ըստ Ֆրանսիական տարբերակների

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐ ԱՆԿՅԱՍԸ

ՈՒԵՖԱ-ի հաղթական խաղերը Հայաստանի դեմ շարունակվում են

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Մարզական մեկնաբան

Մեր թերթն արդեն մի քանի անգամ անդրադարձել է ՈՒԵՖԱ-ի հերթական տարօրինակ որոշմանը՝ կազմված 1996 թ. Անգլիայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Շտուտգարտի մեր թղթակից ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆԻ, որը ներկա է գտնվել Մնեւում, մեր ընթերցողներն արդեն տեղյակ են, որ Հայաստանի հավաքականը թեեւ իրավունք է ստացել մասնակցել Եվրոպայի հերթական առաջնության ընտրական խաղերին, սակայն սեփական հարկի տակ հանդիպումները դարձյալ չեզոք դաշտում: ՈՒԵՖԱ-ն իր այդ որոշումը կայացրել է դեկտեմբերի 13-ին Մնեւում տեղի ունեցած հերթական նիստում, բայց Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիան դրա վերաբերյալ փաստը ստացել է մեկ ամիս անց, ընդամենը երկու օր առաջ: Այդ այն դեպքում, որ չորս օր հետո կայանալու է վիճակահանությունը:

Ավելի լավ դրսեւորելու համար ՈՒԵՖԱ-ի դաշնաբանությունների բոլոր նորությունը, որոնց շնորհիվ հայկական ֆուտբոլը հերթական անգամ հաղթական խաղերի զոհ է դառնում, նոցա սակահարմար գտանք ամբողջովին ներկայացնել ՀՀ ֆեդերացիային հասցեագրված այդ նամակը. *«Հայտնվում է, որ 1993 թ. դեկտեմբերի 13-ին ՈՒԵՖԱ-ի հատուկ կոմիտեն որոշում է ընդունել, որ 1994-1996 թթ. Եվրոպայի առաջնությանը մասնակցելու դիմում տված բոլոր երկրները մասնակցելու են 1994 թ. հունվարի 22-ին Մանչեսթրում կայանալիք վիճակահանությանը: Դա նշանակում է, որ բոլոր 46 պետությունները մասնակցելու են ընտրական մրցաշարին: Այդուհանդերձ հատուկ հանձնաժողովը ափսոսանք է հայտնում, որ 4 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Խորվաթիայում եւ Ադրբեջանում խաղվիճակը բարդ է: Բոլոր հիշյալ երկրները ռազմական հակամարտության մեջ են այս կամ այն չափով եւ բնական է, որ դա այցելող թիմերի համար որոշակի վտանգ է ներկայացնում: Ուստի նպատակահարմար է գտնվում, որ այս երկրներում խաղացվելիք հանդիպումներն անցկացվեն չեզոք տարածքներում՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի խաղերը՝ ԱՊՀ-ի որեւէ այլ կետում, Խորվաթիայինը՝ մոտակա չեզոք տարածքում՝ ՈՒԵՖԱ-ի հետ համաձայնեցված:*

Հատուկ հանձնաժողովը մտահոգություն է հայտնում Արեւելյան Եվրոպայի մի շարք պետություններում առկա դժվարությունների կապակցությամբ (միջազգային թռիչքներ, հյուրանոցային պայմաններ, սոցիալ-տնտեսական ընդհանուր անբավարար վիճակ):

Հույս է հայտնվում, որ կառավարություններն ուշադրության կենտրոնում կպահեն այս կետերը եւ բարեփոխումներ կկատարվեն հիշյալ բնագավառներում:

ՈՒԵՖԱ-ն խոստանում է իրենից կախված ամեն ինչ անել այդ երկրների ֆուտբոլի ֆեդերացիաներին օգնելու»:

Անկասկած, կարելի է դատապարտել ՈՒԵՖԱ-ին իր ոչ արդարացի դիրքորոշման համար, որն անընդհատ եւ համառորեն խաղարկում է այն միտքը, թե ռազմական հակամարտության դաշնաքով հնարավոր չէ աղաղակվել այցելող թիմերի անվտանգությունը: Դա ամենեւին Հայաստանին չի վերաբերում: Երեւի ճիշտ է Գրիգոր Ամիրջանյանը, որ Ժնեւից տված իր ոեպորտաժում նշել է, թե ՈՒԵՖԱ-ի տարօրինակ կեցվածքը Հայաստանի նկատմամբ հետեւանք է բուրգ լոբբիի եւ ՈՒԵՖԱ-ի բուրգ քարտուղարի հոգեբանական ճնշման, որն, ի դեպ, դեկավարում էր այդ կարեւոր խորհրդակցությունը: Բայց պետք է խոստովանել նաեւ, որոշ դաշնաբանությունների հիմնավորվածությունը (անկայուն թռիչքներ, սոցիալ-տնտեսական անբավարար վիճակ, անհուսալի կապ եւ այլն): Ամենեւին ՈՒԵՖԱ-ի մեղքը չէ, որ ժամանակին ուղարկված դաշտոնական լուսավորությունը Հայաստան է հասնում մեկ ամիս ուշացումով: Այնուամենայնիվ այս ամենն իրավունք չեն տալիս ՈՒԵՖԱ-ին զրկել Հայաստանին սեփական հարկի տակ հանդես գալու իրավունքից: Դա իրոք քաղաքական խաղ է: Ում դարձ չէ, որ զրկելով ԼՂՀ-ի հետ իրոք դաստերազմող Ադրբեջանին, ՈՒԵՖԱ-ն խստականություն չանելու համար չի կարող նման կերպ չվարվել նաեւ Հայաստանի նկատմամբ: Մի՞թե զարմանք չի հարուցում ՈՒԵՖԱ-ի «նոպատակահարմարությունը», որ Հայաստանի հավաքականը իր հարկի տակ նախատեսված խաղերն անցկացնի ԱՊՀ-ի որեւէ այլ կետում: Իսկ ո՞վ է այդ դեպքում աղաղակելու անվտանգությունը: Թե՞ հակամարտության ձգտող կողմերին այդ դեպքում դժվար կլինի ներկայանալ խաղերին:

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան վաղուց իր համաձայնությունն է տվել, որ մեր ընտրանին մասնակցի Եվրոպայի առաջնությանը, բայց ինչպես նշեց ֆեդերացիայի նախագահ Նիկոլայ Ղազարյանը, ֆեդերացիան ամենեւին հաճաձայն չի խաղերը չեզոք դաշտում անցկացնելու ՈՒԵՖԱ-ի անազնիվ որոշմանը, որի համար պատասխանատու է իր դաշտոնական բողոքը ներկայացնել:

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

«Աղեղախոս» Սոյիչկովը

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
սեփ. թղթակից, Ֆրանսիա

Եվրոպայի 1992 թ. լավագույն ֆուտբոլիստ (ըստ «Օնզի») Բուլղարիայի հավաքականի հարձակվող եւ Իսպանիայի «Բարսելոն» թիմի ռմբարկու Խրիստո Սոյիչկովը դարձել է ֆուտբոլի «աղեղախոս ողին»: Նրա ամեն մի հայտարարությունը դատապարտություն կամ գովաբանություն է զարմանակում ֆուտբոլային դեկավարների նկատմամբ: «Խենթ Խրիստո», բարձրաձայն այսպես են վանկարկում Բարսելոնի բազմահազար մարզասերները, որոնք սիրում են Խրիստոյին եւ անհամբեր սպասում ռումբի պես պայթուցիկ նրա հերթական հայտարարություններին, որոնք ամեն շաբաթ հայտնվում են բազմատղանակ թերթերի էջերում:

«Onze Mondial» ֆուտբոլային հանրահայտ ամսագրին տված հարցազրույցում Սոյիչկովը դատապարտեց Շվեդիայի ֆուտբոլային դեկավարներին, հայտարարելով. «Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում, լինեն Սոֆիայում, Ավստրիայում կամ Շվեդիայում, Բուլղարիայի հավաքականի դեմ միշտ գործում էին կաշառված մրցավարներ»: «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթում Սոյիչկովն ավելի տեղեկություններ տվեց եւ ավելի ճշտեց վերջին հայտարարությունները, ավելացնելով. «ՈՒԵՖԱ-ի նախագահ Լենարտ Յոհանսոնը շվեդ է, եւ դարձ է, որ Շվեդիայի հավաքականը դեմ է ԱՄՆ-ի ուղեգիր ձեռք բերեր: Այդ հրահանգը վերեւից էր եկել»: Նման կարծր հայտարարություններ գրավեցին ՖԻՖԱ-ի ուշադրությունը, որն անտարբեր չէր կարող մնալ Սոյիչկովի «զրպարտություններին», չէ՞ որ համազգեստի դաշտի խնդիր է:

ՖԻՖԱ-ն Սոյիչկովի ֆրանսիական թերթերին տված հայտարարությունների իսկությունը դարձելու համար հատուկ հանձնաժողով ստեղծեց: Սա Սոյիչկովի 1-ին «զոհը» չէ: Երբ նա հանդես էր գալիս Սոֆիայի ԲԿՄԱ (բանակային) թիմում, որ Բուլղարիայի գավաթի խաղարկության եզրափակիչում մրցում էր Սոֆիայի «Լեւսկի» (ոստիկանական թիմ) հետ, կովեց խաղացողներից մեկի հետ եւ խաղադաշտն ամբողջովին վերածվեց մարտադաշտի: «Այն ժամանակ ժողովուրդն արդեն չէր սիրում կոմունիստությունը: Այդ կոլվն առիթ եղավ զգելու բանակի եւ ոստիկանության թիմերի համբավը ու ես վստահ եմ, որ մրցավարը ծախված էր», հայտարարում է Սոյիչկովը, որն ամեն տեղ տեսնում է մի մեղավոր անձի, այն էլ մրցավարի: Վերջերս Սոյիչկովն Իսպանիայի դաշտաբության խաղերից մեկում դիտավորյալ տորել է մրցավարի ոտքերը, քանի որ վերջինիս դաշտաբությամբ 6 անգամ զրկվել էր խաղերից: 1992 թ. նոյեմբերին, երբ «Բարսելոնը», խաղում էր նույն քաղաքի «Էսպանյոլ» թիմի հետ, Սոյիչկովը մրցակցի դարձությամբ գրավելուց հետո մոտեցավ դատի այն հատվածին, որտեղ տեղավորվել էին «Էսպանյոլի» դեկավարները եւ դառնալով այս թիմի նախագահին գոռաց «Ցերբուս», որը նշանակում է «դրոնիկի զավակ»: Այս է Սոյիչկովը: Խրիստոն հիմա երազում է ԱՄՆ աշխարհի առաջնության խաղերի մասին, որն իր կյանքի ամենալավ երազ կլինի, եթե իհարկե, ՖԻՖԱ-ն մի ուրիշ «նոպատ» չհյուսի նրա համար: ■

ՊԱՏԱՇԱՐ

Քերրիգանը խանգարված մարդու թիրախ

Ինչպես անցյալ տարի աշխարհի ուժեղագույն թենիսիստուհի Մոնիկա Սելեշն, այնպես էլ ամերիկացի հանրահայտ գեղասահորդուհի Նենսի Քերրիգանը թիրախ դարձավ խանգարված մի անձի:

Երբ Քերրիգանը Դետրոյտի մարզադահլիճներից մեկում նախապատրաստվում էր ԱՄՆ-ի առաջնությանը, որտեղ պետք է խաղարկվեին Լիլեհամմերի օլիմպիական խաղերի երկու ուղեգրերը, անհայտ մեկը, որի անձը դեռեւս չի որոշվել, անսպասելիորեն հարձակվելով Նենսիի վրա մետաղյա ձողով մի քանի անգամ հարվածեց նրա ոտքերին:

Այդ խենթը դիմելով փախուստի, խառնվեց ժողովրդին եւ անհայտացավ: Քերրիգանը ծանրապես վիրավորված ծնկներից եւ, ի վիճակի չէր 24 ժամ հետո մասնակցել Ամերիկայի առաջնությանը: «Այս արկածի հետեւանքները կարող էին ավելի ծանր լինել», ամերիկյան հեռուստատեսությանը հայտարարեց Նենսի Քերրիգանը:

Գեղասահորդուհուն հաճախ համեմատում են հանրահայտ դերասանուհի «Փորիկ Օդրի Հեփբյուռնի» հետ նմանության համար: 24 տարեկան Նենսի Քերրիգանը Միացյալ Նահանգների ամենաժողովրդական մարդուհիներից մեկն է: Ըստ «People» հանդեսի, Նենսի Քերրիգանը Ամերիկայի 50 գեղեցկուհիներից մեկն է:

Ցավոք, նման դեպքը առաջինը չէ եւ ոչ էլ վերջինը: Կատարինա Վիտը 1990 թ. մի անհայտ անձի կողմից հետապնդվեց: Վերջինս նրան ուղարկեց մսագար մարդու 60-ից ավելի սեռական նամակներ:

Երբ մի օր Վիտը Դենվերում մասնակցում էր մրցումների, այս անհայտ մարդը նրա վրա նետեց մի ծանր տուփ: Ոստիկանությունը ձերբակալեց այս խանգարվածին, որի անունն էր Հարրի Վեյսման: Վերջինս դատապարտվեց 37 ամսվա բանտարկության: Գ. Ա.

ԽՈՇԱՆԿԱՐ

7-րդ եվրոպականը Բելգիայում

Ինչպես գրում է Փարիզում տպագրվող «La Lettre de l'UGAB»-ը Հայ բարեգործական ընդհանուր միության համաեվրոպական մարզական 7-րդ խաղերն անցկացվելու են 1994 թ. ապրիլի 1-ից 4-ը Բելգիայի Անվեր քաղաքում: ՀԲԸՄ-ի հատուկ հանձնաժողովը ուսումնասիրելով մարզակառույցների վիճակը, նման որոշում կայացրեց: Նախապատրաստական աշխատանքներն ընթանում են կանոնավոր հունով:

Լավագույներն իտալական ձեւով

Իտալական «Գազետա դելլա սպորտ» թերթը հարցումով որոշեց տարվա լավագույն մարզիկներին: Աշխարհի առաջին մարզիկ ճանաչվեց իսպանացի հեծանվորդ Միգուել Ինդուրայնը: Երկրորդ տեղում է կուբացի բարձրացատկող Խավիեր Սոտոմայորը, երրորդը՝ ձողացատկող Սերգեյ Բուբկան, չորրորդը՝ Ալեն Պրոստը, հինգերորդը՝ իտալացի հեծանվորդ Ֆանկ Ջիրարդելին, վեցերորդը՝ անգլիացի արագավազորդ Լինֆորդ Քրիսթին, յոթերորդը՝ Մայքլ Ջորդանը:

Կրկին Բաջջոն

Որքերտ Բաջջոն շարունակում է հարուստանալ նորանոր պարգեւներով: Ինչպես հայտնի է, վերջերս նա ՖԻՖԱ-ի կողմից ճանաչվել է աշխարհի, իսկ «Ֆրանս ֆուտբոլի» կողմից՝ Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ: Եւ ահա Իսպանիայի «Տող մարկա» ֆուտբոլային թերթի հարցման համաձայն էլ, որին մասնակցեցին տարբեր երկրների 100 մարզական լրագրողներ, Բաջջոն ճանաչվեց լավագույնը: 2-րդը «Բարսելոնի» բրազիլացի խաղացող Ռոմարիոն է, 3-րդը՝ նույնպես «Բարսելոնի» խաղացող դանիացի Մայքլ Լաուդրուպը:

Ներկայացնում ենք մասնակիցներին

Աշխարհի գավաթ '94

Սաուդյան Արաբիա

Տարածությունը՝ 2 150 000 քառ. կմ
Բնակչությունը՝ 15 500 000
Մայրաքաղաքը՝ Ռիյադ
Ֆեդերացիան հիմնադրվել է 1959թ.
Միջազգային ֆեդերացիայի անդամ է 1959 թ.
Ֆուտբոլով զբաղվում է 9 600 մարդ:
Ակումբների թիվը՝ 154
Աշխարհի առաջնություններին չի մասնակցել
Աշխարհի 15-րդ առաջնության ընտրական փուլում ընդգրկված էր ասիական փնջի «Ե» խմբում
Արձանագրել է հետեւյալ արդյունքները.

Նախնական փուլ («Ե» խումբ)

Ս. Արաբիա-Մալայզիա	6-0, 8-0
Ս. Արաբիա-Մալայզիա	1-1, 3-0
Ս. Արաբիա-Քուվեյթ	0-0, 2-0

Եզրափակիչ փուլ

Ս. Արաբիա-Ճապոնիա	0-0
Ս. Արաբիա-Հյուսիս. Կորեա	2-1
Ս. Արաբիա-Հարավ. Կորեա	1-1,
Ս. Արաբիա-Իրաք	1-1
Ս. Արաբիա-Իրան	4-3

Եզրափակիչ փուլի աղյուսակը

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. Ս. Արաբիա	7	5	2	3	0	8-6
2. Հրվ. Կորեա	6	5	2	2	1	9-4
3. Ճապոնիա	6	5	2	2	1	7-4
4. Իրաք	5	5	1	3	1	9-9
5. Իրան	4	5	2	0	3	8-11
6. Հս. Կորեա	2	5	1	0	4	5-11

Հավաքականի ավագ մարզիչն էր հայանացի Լեո Բենհակերը: Վերջերս նրան փոխարինեց Մոհամմեդ Ալ Սրասին:

Հավաքականի կազմը.

Դարպասապահներ՝
Ալ Դիայա, Ալ Սադիկ

Պաշտպաններ՝
Ալ Դսարի, Ալ Խլավի, Ալ Ռումի, Ալ Ալվի, Ալ Ջավադ, Ալ Դաուդ, Ալ Կարնի

Կիսապաշտպաններ՝
Մադանի, Ամին, Ալ Նուանիա, Ալ Մուալիդ, Ալ Նուսա, Ալ Թեմավի, Սալեհ

Հարձակվողներ՝
Մոհամմեդ, Օվայրան, Միհալել, Ալ Ջաբեր, Ալ Աբաս, Ֆալաբահ: ■

digitised by A.R.A.R.@

օրակարգ

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԱԱՊՎ-ը վերակառուցվում է. Քիմիկոսին փոխարինում է ֆիզիկոսը

Սկիզբը էջ 1

Երեկ կայացած բրիֆինգում ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանը Ազգային անվտանգության վարչությունը վերակառուցելու վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագրի կապակցությամբ նշեց, որ ԱԱՊՎ բնորոշ խնդիրները ոչնչացնելն է լինեն հետախուզությունը եւ հակահետախուզությունը: Այս խնդիրները կատարելու համար վարչությունը ոչնչացվի է ենթարկվի կառուցվածքային փոփոխությունների: Քանի որ, ըստ Աբրահամյանի խոսքերով, նախկին կառուցվածքը ստեղծված էր Խորհրդային Միության ժամանակաշրջանում եւ ծառայում էր այլ նպատակների, նախ եւ առաջ այլախոհների հետապնդմանը: Եւ որովհետեւ, ըստ նախագահի մամուլի քարտուղարի, Հայաստանում նման խնդիրներ չկան, հետեւաբար հատուկ ծառայությունները ոչնչացվի է կենտրոնական նշված երկու խնդիրների՝ հետախուզության եւ հակահետախուզության վրա:

Ինչ վերաբերում է Ազգային անվտանգության ոլեական վարչության ղեկավարի խնդրին, աղա Արամ Աբրահամյանն այն միտքը հայտնեց, թե նախատեսված վերակառուցումը ամենեին կապված չէ ԱԱՊՎ այժմ աղեն նախկին ոլես Էդուարդ Սիմոնյանցի անձի հետ, որին ՀՀ նախագահը շատ բարձր է գնահատում, եւ նրա հնարավորությունները կօգտագործվեն այլ աշխատանքներում:

Էդուարդ Սիմոնյանցը, ինչպես հայտնի է, մասնագիտությամբ նավթաքիմիկոս է եւ ազգային անվտանգության համակարգում հայտնվել է 1990 թ., աշխատանքի անցնելով Հայաստանի նախագահի մզգային անվտանգության գծով խորհրդական աշխատակազմում, այնուհետեւ 1993 թ. փետրվարին նշանակվելով Հայաստանի Ազգային անվտանգության ոլեական վարչության ոլես: Թե ինչպե՞ս է նա հայտնվել ազգային անվտանգության համակարգում՝ իր խոսքերով, հիմա էլ երին կարելի է գտնել, որովհետեւ համաոլասխան երկարամյա ոլատրաստություն են անցել մինչեւ նրանք ոլաշտոնները: Այսոլես էր

հայտարարել նա 1993 թ. մարտին լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

Եւ ահա, մոտ մեկ տարի անց նրա նշանակումից, անվտանգության վարչությունը գլխավորելու է անցնում նույնոլես ազգային անվտանգության համակարգում աշխատելու չփորձ չունեցող անձնավորություն, համենայն դեպս, ուղղակիորեն այդ գործին չառնչվող:

Հայտնի է, որ ԱԱՊՎ նոր ղեկավար նշանակված Դավիթ Շահնազարյանը, մասնագիտությամբ ֆիզիկոս լինելով, կատարում էր նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպանի ոլարտականությունները եւ միջոլեական միջոորդական գործունեության բավական փորձ ունի:

Ժամանակին նա նույնիսկ համարվում էր ՀՀ արտգործնախարարի ոլաշտոնի հավակնորդներից մեկը: Ինչ վերաբերում է ազգային անվտանգության մարմիններում աշխատանքի փորձին, աղա երեկ բրիֆինգում ՀՀ նախագահի մամուլի քարտուղարն այն կարծիքը հայտնեց, որ կարեւորն այդ փորձը չէ, այլ հատակ խաղախական դիրքորոշում ունենալն է: Իբրեւ օրինակ նա բերեց ՀՀ ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանին, որը եւս իր բնագավառի մասնագետ չէր ու նման աշխատանքի փորձ չուներ: Ինչպես Արամ Աբրահամյանը նշեց, Ազգային անվտանգության ոլեական վարչության վերակառուցման հարցը երկար ժամանակ քննարկվում էր, եւ իր կարծիքով, այն ոլեսք է ղեկավարի խաղախական գործիք:

Արդյոք այս երկար քննարկումը ներառո՞ւմ էր նաեւ Էդուարդ Սիմոնյանցի՝ իբրեւ ԱԱՊՎ ղեկավարի հարցը:

Համենայն դեպս, ԱԱՊՎ-ի 57-ամյա՞ նախկին ղեկավարը մեր կարճատեւ հեռախոսազրույցի ժամանակ հրաժարվեց որեւէ կերպ մեկնաբանել իր ոլաշտոնաթողությունը: Նա բացասական ոլատասխան տվեց նաեւ մեր այն հարցին, թե ելե՞լ են արդյոք նրա ոլաշտոնանկության որեւէ դրդապատճառներ: Միակ դրական ոլատասխանը, որ մեզ տվեց ոլրն. Սիմոնյանցը, այն էր, որ իրեն իսկապես այլ աշխատանք են առաջարկել, ինչն ավելի մանրամասնել նա հրաժարվեց:

Եւ այսոլես, Հայաստանի Ազգային անվտանգության ոլեական վարչությունը ՀՀ նախագահի հրամանագրով վերակազմավորման է ենթարկվում: Հիշեցնենք, որ Ռուսաստանում եւս ազգային անվտանգության հարցերով զբաղվող մարմինը՝ ազգային անվտանգության նախարարությունը, նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով վերակազմավորվել է: Քանի որ Ռուսաստանի ներքաղաքական իրադարձություններն այս կամ այն կերպ իրենց ազդեցությունն են ունենում Հայաստանի իրադարձությունների վրա, ՀՀ ԱԱՊՎ վերակազմավորումը եւս կարելի է թեկուզ եւ անուղղակիորեն կապել Ռուսաստանի ԱԱՆ վերակազմավորման հետ, իհարկե, դրան գումարելով նաեւ հայաստանյան բոլոր հայտնի եւ անհայտ ոլատճառները ու նախադեպերը, ճշտված եւ չճշտված կարծիքները ԱԱՊՎ վերակազմավորման կապակցությամբ, չբացառելով նաեւ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական (այժմ արդեն նախկին) Ատոս Մանուչարյանի հրաժարականի հետ դրա կապը: Հաշվի առնելով, իհարկե, այն հանգամանքը, որ ԱԱՊՎ նախկին ղեկավար Էդուարդ Սիմոնյանցը հենց այդ «դարբնոցի կադր է»: Գ. Ն.

ՍՈՒՐԵՆ ՄՈՐՈՍՅԱՆ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ինչպե՞ս կապահի իրեն դոլլարը եւ ինչո՞

ՄԱՐԳԱՐ ՄԵԼԵՔՅԱՆ.

Թեեւ մոսկովյան միջբանկային վալյուտային բորսայի վերջին, միանշանակորյան նստաշրջանի ժամանակ ռուսական ռուբլու կուրսը ամերիկյան դոլլարի նկատմամբ էական փոփոխություններ չենթարկվեց, այնուհանդերձ ակնհայտ են վերջին ժամանակներս ռուսական ռուբլու անկման միտումները: Նորանկախ հանրապետություններում ելակետայինը դոլլարի կուրսի ձեւավորման համար մոսկովյան միջբանկայինից հասնող տեղեկությունն է: Հենվելով սրա վրա «ծայրամասերում» սահմանվում է վալյուտայի կուրսը՝ որոշես կանոն մի բանի կենտրոն բարձր մոսկովյանից, վալյուտա գրավելու նոպատակով: Ահա թե ինչու է կարեւորվում Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող վալյուտային շուկաներում տիրող իրադրությունը մեր փոքրիկ հանրապետության փոքրիկ շուկայի համար:

Ռուսաստանի փորձագետները գտնում են, որ չի բացառվում դեմքերի այնոլիսի զարգացում, երբ 1994 թվականի վերջին ամերիկյան դոլլարը հավասարվի 30 հազար ռուսական ռուբլուն, այսինքն Ռուսաստանի Դաշնությունը թեւակոխի գերարժեզրկման փուլ:

Պատճառների թվում բերվում են ա) գյուղատնտեսությանը հատկացված լրացուցիչ վարկերը եւ արտնյալ վարկերն առհասարակ, որոնք բնականաբար ուղղվելու են դեպի վալյուտային շուկա, բ) Բելառուսի հետ դրամական համակարգերի միասնականացումը (որն, ի դեպ, Ռուսաստանի փոխվարչապետի պատասխանից եզրակացրի Գայդարի հրաժարվելու հիմնական պատճառներից մեկն է), գ) Դումայի աշխատանքների սկսվելը, բանզի այս մարմնում հիշ չեն նրանք, ովքեր պատրաստ են ցիրուցան անել պետությունն (օրինակ, խորհրդարանի նոր շենքի կառուցման համար առանձնացվող 500 մլն դոլլարը, որը Ռուսաստանի բյուջեի տարեկան հատկացումների 5 տոկոսն է կազմում, այն չափն է, որն ուղղվում է երկրի մշակույթի, գիտության եւ սոցիալական աղահովության բնագավառները միասին վերցրած):

Իսկ մոտակա 2-3 շաբաթների համար կանխատեսումներ անելիս փորձագետները դեպքերի զարգացումը կապում են նախ Ռուսաստանի Դաշնության նախարարների կաբինետի հետ, թե կոնկրետ ովքեր ինչ պատասխաններ կգրաղեցնեն, եւ աղա՝ ինչպե՞ս կընթանա Բելառուսի հետ դրամական համակարգերի միասնականացումը:

Եւ եւս մեկ հանգամանք, որն է՝ ինչպե՞ս իրեն կպահի այս ամենի ֆոնի վրա Ծննդյան տոների արձակուրդից սրտփվող վալյուտային շուկան, հատկապես մոսկովյան միջբանկային վալյուտային բորսան:

Արդյոք Ռուսաստանի իշխանության վերին օղակներում տիրող ներկայիս անորոշության միտումները չե՞ն փոխանցվի վալյուտային շուկա ազիրատաժի ձեւով, ինչպես արդեն եղել է ոչ մեկ անգամ (հիշենք թեկուզ նախագահ-խորհրդարան հակամարտությունը):

Բնականաբար վերը թվարկված հանգամանքները, դրանցից ծնվող միտումները ոչ միայն անուղղակիորեն ազդում են մեզանում ձեւավորվող վալյուտային իրադրության վրա, այլեւ, վարակիչ լինելով, թափանցում են նաեւ մեր էկոնոմիկայի եւ իշխանության համադասասխան մակարդակները: Իսկ մեր ունեցած Ռուսաստանի համեմատ էապես նվազ դրամաշրջանառության, հարդրակցության եւ էներգետիկ բարդությունների պայմաններում (գումարած շրջափակումն ու պատերազմը) դրանց հետեւանքներն ավելի ցայտուն են ոչ միայն ինքնյացիոն արտահայտությամբ, այլեւ իբրեւ ընդհանուր աղակայունացնող գործոն՝ առհասարակ: Իսկ մենք պատրա՞ստ ենք դրան: ■

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի մտավորականների հանդիպում

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՏԵՊԵՆ: Մոսկվայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Ռամիզ Ռզաեւը հայտնեց, որ այս շաբաթ Ադրբեջանի լիազոր ներկայացուցչության նախաձեռնությամբ Մոսկվայում անցկացվելու է Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի մտավորականության ներկայացուցիչների հանդիպում:

Առայժմ հայտնի չէ, թե Ադրբեջանից ով կմասնակցի այդ միջոցառումներին: Մյուս երկու կողմերը կներկայացնեն ակադեմիկոսներ Շատալինը եւ Աբալկինը (Ռուսաստան) եւ նախկին ԽՍՀՄ պետության նախկին փոխնախագահ Սիսարյանը (Հայաստան):

Ադրբեջանցի դիվանագետը նաեւ ընդգծեց, որ հանդիպումների ընթացքում կքննարկվեն Ղարաբաղի շրջանում խաղաղության հասնելու, գաղթականների հայրենադարձման հարցերը եւ այլ թեմաներ: ■

Թրանսիական կազմակերպությունը
փնտրում է Ֆրանսերենի արագացված
ուսուցման հերթական դասընթացը:
Շտապեք, տեղերը սահմանափակ են
REGION RHONE-ALPES
Հասցեն
Խանջյան 13ա.
հեռ. 56.64.84

ՀԱՄԱՌՈՏ

Պետք է ամրապնդել ԱՊՀ երկրների ազգային դրամները

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈՒՆՎԱՐ, ՏՆՏՊ: «Ամենից պետք է անցնենք զուգահեռաբար գործող ներքին վալյուտային շուկաների ստեղծման ու զարգացման փուլը», հայտարարեց երեւանի ֆոնդային բորսայի հրավերով այստեղ գտնվող Մոսկվայի միջբանկային վալյուտային բորսայի նախագահ Ալեքսանդր Զախարովը: «Առանց նախապատրաստական աշխատանքի, ռուբլու միասնական տարածքի ստեղծումը դժվար է: Մենք պետք է միավորման հասնենք միայն այն բանից հետո, երբ կամրապնդենք մեր ազգային դրամական միավորները, շուկայական հարաբերությունների համակարգի միջոցով կպարզենք մեր արժույթների իրական հարաբերակցությունները: Եւ միայն այդ ժամանակ պարզ կդառնա՝ պատրա՞ստ ենք արդյոք մենք միավորման», ասաց Զախարովը:

Թաքարական նավթ Ուկրաինային

ԿԻԵՎ, 16 ՀՈՒՆՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Կիեւում ստորագրվեց Ուկրաինայի եւ Թաքարստանի առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցության համաձայնագիր: Ուկրաինան հեստրֆրություն դրսեւորեց թաքարական նավթի ու նավթամթերքների ձեռքբերման նկատմամբ:

ՍԻԲԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Քո փրկությունը քո ձեռքում է: Ովքեր ուզում են ժողովրդին օգնել դուրս գալու այս աղէտալի վիճակից, թող յունուարի 22-ին ժամը 1-ին հաւաքուեն Օպերայի հրապարակ:

Նախաձեռնողների անունից՝ Ռաֆայէլ Համբարձումեան, Գեղամ Սարգսեան, Ուզան Թորոսեան, Հրաչիկ Պիպոյեան, Վովա Նազարեան, Վահան Մելքոնեան:

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունեաց 2 Գրանցման թիւ 65. Դասիլ 69149. Տպաքանակ 15 000. Պատուէր 1673 Ստորագրուած է տպագրության՝ 17. 01. 1994 Գինը՝ 100 ռուբլի

digitised by A.R.A.R.@